ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Միջնադարյան Հայաստանի տնտեսական և քաղաքական կենտրոններից մեկի՝ Դվին քաղաքի ավերակները գտնվում են Հայկական ՍՍՀ Արտաշատի շրջանում:

Ժամանակին քաղաքը շրջապատված էր հզոր պարսպով, ուներ ամուր միջնաբերդ և ընդարձակ տարածություն էր գրավում: Ներկայումս այդ տարածությունը զբաղեցնում են մի քանի գյուղեր իրենց հողհանդակներով և միայն երկու չկառուցապատված բլուրներ՝ միջնաբերդը և կենտրոնական թաղամասն են մատչելի մնացել հնագիտական հետազոտման համար: Պեղումները ցույց տվեցին, որ կենտրոնական բլուրը՝ քաղաքի հիմնական կորիզը, բնակեցված է եղել դեռևս մթա III հազարամյակում, իսկ առաջին քաղաքատիպ բնակավայրն այստեղ երևան է եկել մթ IV դարում:

V դ. կեսերին Դվինը երկրի տնտեսական և քաղաքական կյանքի կենտրոնն էր: Հայաստանը Իրանի և Բյուզանդիայի միջև բաժանվելուց հետո (429) Դվինը դառնում է արևելյան մասի վարչական կենտրոն և շահի փոխանորդի՝ Հայաստանի մարզպանի աթոռանիստը: V—VI դդ. Դվինը, որպես առևտրական կենտրոն և կարևորագույն տարանցիկ կայան, ներգրավվում է միջազգային առևտրի ոլորտը: Նրա շուկայում հայերի հետ միասին առևտուր էին անում տարբեր ազգությունների վաճառականներ՝ հույներ, ասորիներ, պարսիկներ, հրեաներ, վրացիներ և շատ ուրիշներ: Այս շրջանում Դվինն արդեն մարդաշատ քաղաք էր՝ բազմազգ բնակչությամբ:

Դրամի ամենավաղ տեսակը Դվինում սասանյան դրամն էր՝ արծաթե դրահմը, որը, ինչպես և Իրանում, դառնում է վճարումների հիմնական միավորը: Դվինում գտնվել է V—VII դդ. վերագրվող սասանյան դրամների գանձ՝ ավելի քան երեսուն տարբեր քաղաքների դրոշմներով: Սասանյան դրամներին զուգընթաց շրջանառության մեջ էին նաև բյուզանդական ոսկե դինարները:

Հայկական ապրանքները արտահանվում էին երկրի սահմաններից շատ հեռու: Դրանց թվում էին թանկագին քարերը, բուսական ներկերը և բնական մյուս հարստությունները: Դվինցի վաճառականները շրջանառության մեջ են դնում նաև իրենց արհեստագործների արտադրանքը: Դվինում արտադրված մետաքսե և բրդե գործվածքները հաճախ են հիշատակվում գրավոր աղբյուրներում: Այդ նույն ժամանակաշրջանում ձևավորվում է նաև Դվինի հարտարապետական կերպարը: Բլուրը, որը Դվինի սկզբնական կորիզն էր, կառուցապատվում է պալատներով, վարչական շենքերով և մեծահարուստ քաղաքացիների տներով: Բլուրը շրջափակվում է երկշար պարսպով և դարձվում ամրացված միջնաբերդ: Մյուս՝ ավելի փոքր բլրի վրա կառուցվում են կաթողիկե եկեղեցին, փոքր եկեղեցիներ ու պալատներ: Հետագայում քաղաքն ընդարձակվում է միջնաբերդի շուրջը, իր մեջ առնելով շրջակա գյուղերը և Արարատյան դաշտի արգավանդ հողերը: Ավելի ուշ քաղաքի այս մասը ևս շրջապատվում է հզոր պարսպով, որն ուներ առևտրական հանապարհների ուղղություններին համապատասխանող չորս դարբասներ:

VII դ. կեսերը Առաջավոր Ասիայի պատմության մեջ մտան որպես Արաբական խալիֆայության նվաճումների շրջան: Ասորիքը և Միջագետքը նվաճելուց և Իրանում Սասանյան կայսրությունը տապալելուց հետո, արաբները 640 թ. հասան Հայաստան: 641 թ. կարճատև, բայց համառ դիմադրությունից հետո նրանք գրավում են Դվինը, ավերում և հարուստ ավար վերցնելով վերադառնում Ասորիք: 654 թ. Դվինը երկրորդ անգամ և արդեն վերջնականապես, գրավվում է արաբների կողմից: Ցանկանալով լավ հարաբերություններ հաստատել դվինցիների հետ, արաբները հատուկ հրովարտակով անձի և գույքի ապահովություն, եկեղեցիների, տաճարների և քաղաքային ամրությունների անձեռնմխելիություն են խոստանում

քաղաքի բնակիչներին՝ անկախ ազգային և կրոնական պատկանելիությունից, պահանջելով նրանցից վճարել գլխահարկ և հողային հարկ: Իշխանության ամրապնդման համար Դվինում հաստատվեց արաբ փոխարքան՝ ոստիկանը, իր կայազորով:

VII դ. սկզբին արաբները ստեղծում են մի վարչական միավոր՝ «Արմենիա» փոխարքայությունը, որի մեջ մտնում էին Վրաստանը, Աղվանքը և Հյուսիսային Հայաստանը: Այս վարչական միավորի կենտրոնն է դառնում Դվինը:

Հզորացած Արաբական խալիֆայության և Բյուզանդիայի միջև տեղի ունեցող կատաղի պայքարի ընթացքում Հայաստանը դառնում է խալիֆայության ռազմա-սարատեղիական ֆորպոստը, որի հետևանքով Հայաստանի անմիջական առևտրական կապերը Բյուզանդիայի հետ գրեթե անհնար են դառնում: Քաղաքական այս իրադրության պայմաններում խզվում են Հեռավոր և Միջին Արևելքի առևտրական հարաբերությունները Միջերկրական ծովի ավազանի երկրների հետ: Ասիենանարար նվազում է Իրանի և Բյուզանդիայի միջև ձգվող «մետաքսի ճանապարհի» նշանակությունը և գնալով բարձրանում հարավային Արաբիայի և Պարսկական ծոցի վրայով ձգվող հարավային ճանապարհների դերը: Արաբները շահագրգռված էին Հեռավոր Արևելքի հետ ունեցած առևտրով, ուստի և «համեմների ճանապարհը» նրանց համար ավելի հարմար և ձեռնտու էր, քան անապանով «մետաքսի ճանապարհը»:

Խալիֆայության դրամական սիստեմի կայունացումից հետո Դվինում, ինչպես և Առաջավոր Արևելքում երևան են գալիս նոր, մանմեդական տիպի դրամներ՝ դինարներ, դիրհեմներ և ֆելսեր: Բուն Դվինում հիմնվում է փողերանոց, որն իր գոյությունը պահպանում է մինչև 941—942 թթ.: Դրամական գյուտերը վկայում են, որ արաբական տիրապետության շրջանում Դվինում հիմնական դրամը արծաթե դիրհեմն էր, ոսկե դինարներ չեն գտնվել: Խալիֆայության նոր քաղաքականության հետևանքով Հայաստանի անտեսական վիճակը ծանրանում է և արաբների ու տեղական բնակչության հարաբերությունները սրվում են: Հետևանքը լինում է այն, որ երկրում ամենուրեք ապըստամբություններ են բռնկվում և սկսում են կազմավորվել տարբեր կողմնորոշումներ ունեցող անկախ իշխանություններ: Դրանցից ամենախոշորը ղեկավարում էր Բագրատունյաց ենգգույն նախարարական տունը, որը կարճ ժամանակամիջոցում տիրում է կենտրոնական Հայաստանին: Նրանք ստանում են «իշխանաց իշխան» տիտղոսը և հարկահավաքման իրավունքը, իսկ 885 թ. Աշոտ Բագրատունին թագադրվում է Հայաստանի թագավոր: X դ. սկզբին Բագրատունիները մշտական նստավայր են դարձնում իրենց հայրենի կալվածք Շիրակը և մայրաքաղաքը Դվինից տեղափոխում են Անի: «Արմենիա» փոխարքայության հյուսիսում հզորանում է Պարտավ քաղաքը, որը փաստորեն դառնում է երկրորդ մայրաքաղաք: Փոխարքայության հայ բնակչության հսկողությունը խալիֆը հանձնարարում է քաղաքի փոխարքային:

Դվինի պատմության մեջ 893—894 թթ. ողբերգական տարեթվեր էին, ուժեղ երկրաշարժի հետևանքով ավերվեց քաղաքը: Պեղումները ցույց են տալիս, որ երկրաշարժից հետո քաղաքի որոշ թաղամասեր այլևս չեն վերակառուցվել: Սակայն քաղաքը շարունակում էր ապրել լիարժեք կյանքով և մնում էր որպես կովախնձոր արաբ փոխարքաների ու բյուզանդական կայսրերի միջև: Դվինի նկատմամբ հավակնություն սկսեցին ցուցաբերել Ատրպատականի էմիրները, Հայաստանի և Վրաստանի թագավորները:

Արաբ պատմիչները արժեքավոր տեղեկություններ են հաղորդում Դվինի տնտեսության, բնակչության սոցիալական և առևտրա-արհեստագործական կյանքի մասին: Հյուսիսի հետ ունեցած առևտրական սերտ կապերի շնորհիվ Վրաստանում և Աղվանքում ստեղծվում են նոր կենտրոններ՝ Թիֆլիսը, Գանձակը, Ղազախը: Սակայն քաղաքական-վարչական դերը կորցնելուց հետո էլ Դվինը մնում է որպես արհեստագործության կենտրոն, չի կորցնում իր առևտրական նշանակությունը: Այդ մասին են վկայում հայկական և արաբական ուղեցույցները, ուր նշված են հետևյալ առևտրական ճանապարհները. 1. Դվինից հարավ, դեպի Քուֆա, Բասրա, Պարսկական ծոց և Հընդկաստան: 2. Դվինից դեպի Մոսուլ, Դամասկոս, Երուսաղեմ և Եգիպտոս: 3. Դվինից դեպի Անի, Կարին, Տրապիզոն, Փոքր Ասիա, Կոստանդնուպոլիս և Հռոմ: 4. Դվինից Պարտավ, Շամախի, Դերբենդ, Կասպից ծով և խազարներ: 5. Դվինից Անիի վրայով, դեպի Թիֆլիս և Սև ծով:

XII—XIII դդ. պատմական գրականության մեջ Դվինի մասին հազվադեպ է հիշատակվում և այս հանգամանքից էլ ելնելով հայ պատմագրության մեջ այն սխալ տեսակետն է իշխում, թե հյուսիսի հետ առևտուրն ընդլայնելու, առևտրական ճանապարհները դեպի հյուսիս-արևելք տեղաշարժվելու և մայրաքաղաքը Անի տեղափոխվելու հետևանքով Դվինը կորցնում է միջազգային առևտրում

ունեցած իր նշանակությունը և XII—XIII դդ. դադարում գոյություն ունենալուց:

Սակայն հնագիտական աշխատանքների արդյունքները ցույց են տալիս, որ քաղաքական նշանակությունը կորցնելուց հետո էլ Դվինը XII—XIII դդ. շարունակում էր գոյություն ունենալ որպես խոշոր առևտրա-արհեստագործական կենտրոն: Միայն XIII դ. վերջում Առաջավոր Արևելքում ստեղծված անբարենպաստ պատմական իրադրության հետևանքով Դվինի քաղաքային կյանքը աստիճանաբար մարում է:

Քաղաքի տերիտորիայում գտնված դրամների ուսումնասիրությունից պարզվում է դրամական շրջանառության հետևյալ պատկերը: X—XI դդ. առևտրական կապերի հիմնական ուղղությունը տեղաշարժվում է դեպի Բյուզանդիա և հյուսիս, շրջանառության մեջ էր բյուզանդական ոսկե դրամը, միաժամանակ լայնորեն տարածված էր նաև բյուզանդական պղնձե մանրադրամը:

Մեծ քանակությամբ իլդեգիզյան դրամների հայտնագործումը ցույց է տալիս, որ Դվինը աշխույժ առևտրի մեջ է եղել Ատրպատականի, Իրանի և Իրաքի հետ:

XII դ. վերջում և XIII դ. սկզբում նկատվում է վրացական դրամների զգալի հոսք: Սկսում են ներթափանցել փոքրասիական սելջուկների դիրհեմները՝ կտրված Կեսարիայում, Կոնիայում, Սիվաշում: Դրամական տվյալները պարզում են մի չափազանց հետաքրքրական հանգամանք՝ XIII դ. սկզբում Դվինը ներգրավված էր առևտրական էլ ավելի ընդարձակ ոլորտի մեջ, քան XII դարում:

Պեղումների ընթացքում գտնված իրերի միջոցով կարելի է գաղափար կազմել քաղաքի առևտրական կապերի մասին: Դվինում գտնվել են Հեռավոր Արևելքի և Առաջավոր Ասիայի այն ժամանակվա հոչակավոր արդյունագործական կենտրոններից բերված առարկաներ՝ սելադոններ Չինաստանից, խեցեղեն և ապակի Սամառայից, Նիշապուրից, Ռեյից, Ռաքայից, Դամասկոսից, Հալեպից և այլ վայրերից:

* * *

Դվինի պեղումները սկսվել են 1937 թ. և դադարեցվել Հայրենական մեծ պատերազմի տարիներին: Հետագայում վերսկսվել են 1946 թ. և հաջողությամբ շարունակվում են մինչև օրս:

Երկարամյա աշխատանքները հնարավորություն տվեցին որոշել քաղաքի սահմանները և նրա կյանքի տարբեր փուլերը, բացահայտել արհեստագործության բազմակողմանիությունն ու բարձր զարգացումը, ժամանակի բարձրարվեստ շինարարական տեխնիկան: Պեղումների շնորհիվ բացվեցին քաղաքի թաղամասերը, կաթողիկե եկեղեցու ավերակները, մեծահարուստ քաղաքացիների տները, քարավանատունը: Պարզվեց, որ քաղաքն ունեցել է ջրամատակարարման բարդ ցանց, թաղնիքներ: Դվինցիները մեծ հաջողությամբ զբաղվել են տարբեր արհեստներով: Նրանք հմուտ դարբիններ էին, ծանոթ էին մետաղների գեղարվեստական ձուլմանը, դրվագմանը: Նրանց հայտնի էին մանածագործության տարբեր բնագավառները, ոսկերչության նրբությունները: Կավե և հախճապակե ամանեղենի հոյակապ նմուշները ապացուցում են, որ Դվինում բարձր վարպետության էր հասել բրուտագործությունը: Պեղումների ժամանակ Դվինում բացվեցին դարբնոցի, բրուտագործական, ոսկերչական, մանածագործական արհեստանոցների մնացորդներ:

Նկատելիորեն զարգացած է եղել նաև ապակեգործությունը: Պեղումների ժամանակ գտնվեց IX—XIII դդ. ապակյա իրերի հազվագյուտ նմուշների մի հավաքածու, որն իր բազմաքանակությամբ և ձևերի բազմազանությամբ պատմական մեծ արժեք է ներկայացնում, ընդլայնում է մեր պատկերացումները Անդրկովկասում և Առաջավոր Արևելքում ապակեգործության զարգացման մասին: Հավաքածուն պարունակում է մեծ թվով իրեր, որոնք տարբեր են իրենց ձևերով, որակով, գույնով, զարդանախշերով և պատրաստման տեխնիկայով: Կան կենցաղային և տեխնիկական ապակյա ամաններ՝ թասեր, բաժակներ, գավաթներ, սկահակներ, սրվակներ, սափորներ, հրազակալներ, մոմակալներ, քիմիական ամանեղեն և լուսամուտի ապակի: Գունավոր ապակուց պատրաստվել են կանացի զարդեր՝ ապարանջաններ, ուլունքներ, մատանիներ, խճանկարի համար գույնզգույն խորանարդիկներ:

Հայաստանի տերիտորիայում գտնված ապակյա իրերը գալիս են հնագույն ժամանակներից: Ապակենման զանգվածից և ապակուց պատրաստված ուլունքներ են հանդիպում մթա I հազարամյակի սկզբի դամբարաններում: Ուրարտական ժամանակաշրջանի ամրոցներում (մթա VIII—VII դդ.) գտնվել են անթափանց ապակուց անոթներ և թափանցիկ ու գույնզգույն ապակուց ուլունքներ: Անտիկ ժամանակաշրջանում ապակյա անոթները լայն տարածում են սաանում: Դրանցից Հայաստանում շատ են պահպանվել շնորհիվ այն բանի, որ հնում սովորություն կար հանգուցյալի հետ զանազան առարկաներ թաղել: Հայաս-

տանում ապակեգործության զարգացման մասին վկայություններ կան նաև գրավոր աղբյուրներում: Այդ մասին առաջին հիշատակությունը պահպանվել է IV դ. պատմիչ Ագաթանգեղոսի մոտ սբ. Հռիփսիմեի վարքի նկարագրության մեջ: Ագաթանգեղոսը գրում է այն մասին, որ III դ. վերջում հռոմեական Հռիփսիմեն, Գայանեն և նրանց ընկերուհիները, քրիստոնեություն ընդունած լինելու համար Դիոկղետիանոսից հալածվելով, փախչում և ապաստան են գտնում Հայաստանում, Վաղարշապատի մոտ այգիների մեջ եղած մի իրենիքում: Ապրուստ հայթայթելու համար նրանք զբաղվում են ապակեգործությամբ, պատրաստում են ապակյա ուլունքներ և վաճառում:

Այս մասին պատմում է նաև X դ. պատմիչ Ուխտանեսը, բայց Հռիփսիմեի ու նրա ընկերուհիների ապաստանի վայր է նշում ոչ թե Վաղարշապատը, այլ Դվինի շրջակայքը: Այս պատմության երկու տարբերակները համադրելիս մենք կարող ենք նշել երկու կարևոր պարագա: Ագաթանգեղոսի՝ նկարագրվող իրադարձությունների զրեթե ժամանակակցի վկայությունը խոսում է այն մասին, որ III—IV դդ. Վաղարշապատի մոտերքում եղել են ապակեգործական արհեստանոցներ, որոնց հետ էլ նա կապել է ապակե ուլունքներ պատրաստող Հռիփսիմեի ու նրա ընկերուհիների գործունեությունը:

Ուխտանեսի վկայությունը առաջին հայացքից կարելի է դիտել որպես Ագաթանգեղոսի տեքստի ուղղակի վերապատմություն: Սակայն այդ մի քանի տողի մեջ կա մի էական տարբերություն: Ագաթանգեղոսը կույսերի բնակավայր է անվանում Վաղարշապատը, այսինքն այն քաղաքը, որը նրա ապրած ժամանակաշրջանում երկրի վարչա-տնտեսական խոշոր կենտրոնն էր: Մինչդեռ Ուխտանեսը, որի օրոք Վաղարշապատն արդեն տնտեսական ոչ մի նշանակություն չուներ, գործողության վայրը տեղափոխում է Դվին, որն այդ ժամանակ դարձել էր առևտրա-արհեստագործական մեծ կենտրոն և, ինչպես ստորև կտեսնենք, նաև զարգացած ապակեգործության կենտրոն էր: Հասկանալի է, որ ապակյա իրերի պատրաստման մասին պատմությունը X դարի պատմիչը կապում է հենց այդ քաղաքի հետ:

Այսպիսով, հենվելով երկու վկայությունների վրա, կարող ենք նշել ապակու արտադրության երկու վայր Հայաստանում, որոնք գործել են տարբեր ժամանակներում, Վաղարշապատը՝ III—IV դդ. և Դվինը՝ X դ.:

Առկա հնագիտական նյութը նույնպես հաստատում է պատմիչների տեղեկությունները: Վաղարշապատի մոտ, հռոմեական ժամանակաշրջանի դամբարանից հայտնաբերվել են մեծ քանակությամբ ապակե անոթներ (անտիկ ձևերի):

Բերված տեղեկությունները (հատկապես Ագաթանգեղոսինը) արտացոլում են ևս մեկ շատ հետաքրքրական հանգամանք՝ կապված առհասարակ ապակեգործության զարգացման հետ: Ուսումնասիրողները վաղուց նկատել են, որ ապակեգործության զարգացման գործում մեծ դեր է կատարել ապակեգործ վարպետների գաղթը երկրից-երկիր: Նոր վայրում նրանք կազմակերպում էին ապակու արտադրությունը, հետևելով արդեն սովորական դարձած ավանդույթներին, հաճախ օգտագործելով իրենց հետ բերած հումքը: Ապակեգործների այս գաղթը բնորոշ էր ապակեգործության զարգացման ոչ միայն նախնական, այլև հետագա շրջաններին:

Դվինի ապակեղենի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ոչ միայն առանձնացնել տեղական ապակեգործության նմուշները, այլև տարգել նրա զարգացման պատկերը: Ապակյա իրերի տիպաբանական և ոճական վերլուծության միջոցով հաջողվում է բացահայտել ապակեգործության զարգացման որոշակի փուլերը և պարզել իրերի տարբեր խմբերի ժամանակագրական սահմանները: Ներմուծված իրերի առանձնացումը թույլ է տալիս բացահայտել առևտրական կապերը:

Դվինի ապակու ուսումնասիրությանը նվիրված են մի շարք աշխատություններ: Այս թեմային նվիրված առաջին գործը Բ. Ա. Շելկովնիկովի «Դվին քաղաքի խեցեղենն ու ապակին» հոդվածն էր ռուսերեն լեզվով, տպված Հայկական ՍՍՀ պատմության պետական թանգարանի «Աշխատություններում» (1959, № 4):

Դվինի պեղումների մասին հարուստ տվյալներ է ամփոփում Ղաֆադարյանի «Դվին քաղաքը և նրա պեղումները» մենագրությունը: Այս գիրքը գրված է հայերեն և ընդգրկում է 1937—1950 թթ. պեղումների մանրամասն հաշվետվությունը, որտեղ կա մի հատված, նվիրված ապակյա իրերին: Միջնադարյան ապակեգործության մասին նյութեր է պարունակում նաև Բ. Ն. Առաքելյանի «Քաղաքները և արհեստները Հայաստանում 9—13-րդ դարերում» (Երևան, 1958) երկհատոր մենագրությունը: Դվինի հնագիտական որոշ նյութեր կան հրապարակված նաև Ա. Ա. Քալանթարյանի «Դվինի նյութական մշակույթը 4—8-րդ դդ.» աշխատության մեջ:

Դվինի ապակյա իրերին են նվիրված տողերիս հեղինակի մի շարք հոդվածները: Նյութի ընդհանուր, հակիրճ բնութագրումից բացի հրապարակվել են որոշ խումբ իրեր, ինչպես օրինակ՝ ալքիմիական ամանեղեն, փորագրված ապակու նմուշներ, առանձին առարկաներ, մասնավորապես՝ ջուրպականարի պատկերով բյուզանդական անոթը:

Դվինի անոթների ապակին հիմնականում բարձրորակ է, լավ եփված: Ապակու քիմիական դիմացկունությունը շատ բարձր է (անոթների միայն չնչին տոկոսն է, որ ժամանակի ընթացքում ծածկվել է փառով և ենթարկվել բյուրեղացման ու իրիզացիայի):

Դվինի ապակու քիմիական բաղադրությունը պարզելու համար անալիզի է ենթարկվել 78 նմուշ, որոնցից երեքը ապարանջան են, չորսը՝ մոզաիկ, խորանարդիկներ, մնացածը՝ ամանեղեն:

Ապակին ենթարկվել է սպեկտրային-որակական (60 նմուշ, նմուշի մեջ տարրերի պարունակության մոտավոր որոշմամբ) և կիսաորակական (17 նմուշ) հետազոտման: Անալիզները կատարել է Դ. Վ. Նաումովը ՍՍՀՄ ԴԱ հնագիտության ինստիտուտի Լենինգրադի բաժանմունքին կից հնագիտական տեխնոլոգիայի լաբորատորիայում, մշակել է Յու. Ա. Շչապովան: Քիմիական լիակատար անալիզի է ենթարկվել միայն մեկ նմուշ (Մ. Ա. Բեզբորոդով):

Յու. Ա. Շչապովայի ուսումնասիրությունների հետևանքով բացահայտվեցին Դվինի ապակու բաղադրության մի շարք առանձնահատկություններ: Կիսաորակական անալիզի ենթարկված 17 հետազոտված նմուշներում ի հայտ են եկել ապակու կազմության մեջ մտնող վեց տարր՝ Na, K, Ca, Mg, S, Al. Հիմքերի պարունակությունը ապակու մասսայի մեջ տատանվում է 11,2 — 27%: Ապակիների մեծ մասը պարունակում է 18—21% հիմքեր: Հիմնային հումքի մեջ կալիումի և նատրիումի հարաբերակցությունը տալիս է հետևյալ պատկերը. հետազոտված ապակիների շուրջ քառորդ մասը (առավել ուշ շրջանի) պատրաստված է բնական սոդայի օգտագործմամբ, մնացածի համար կիրառվել է բուսական մոխիրը: Գրեթե բոլոր ապակիները ալյումին են պարունակում, թեև տոկոսային տարբեր հարաբերակցությամբ:

IX—X դդ. թվագրվող ապակիների մեծ մասը գունաթափված է մարգանեցի օքսիդով, մինչդեռ XII—XIII դդ. վերագրվող ապակիների բաղադրության մեջ մարգանեց չկա:

Սպեկտրային-սուակական հետազոտման ենթարկված ապակիները բաժանվել են վեց հիմնական խմբի, որոնք որևէ տեղական հատկանիշներով աչքի չեն ընկնում և ունեն առաջավորասիական բազմաթիվ զուգահեռներ:

Ապակու բաղադրության հիմնական տարբերակներից մեկը՝ Na, K, Ca, Mg, S, Al ավանդաբար պահպանվել է ինչպես IX—X, այնպես էլ XII—XIII դարերում:

Ապակու բաղադրության անալիզների արդյունքների մանրամասն ուսումնասիրությունը Յու. Ա. Շչապովային բերում է այն եզրակացության, որ Դվինի ապակեգործությունը սկիզբ է առնում միջին արևելյան (Իրան, Իրաք) աղբյուրից, իսկ տեղում զարգանում և բազմանում է այլևայլ տարբերակներով: Ինչպես կտեսնենք, այդ եզրակացությունը հաստատում են նաև ոճական վերլուծության արդյունքները:

Ապակյա իրերի գունային գամման բազմազան է, ըստ որում առավել հաճախ են հանդիպում կանաչ գույնի անոթները, որոնք ունեն տարբեր մգություն ու երանգ, սկսած շատ մուգից, գրեթե սևից, մինչև բաց կանաչը: Մեծ թիվ են կազմում նաև անգույն ապակուց պատրաստված իրերը:

Ուսումնասիրված ապակին ըստ գույնի տալիս է տոկոսային հարաբերության հետևյալ պատկերը. կանաչ՝ 39%, անգույն՝ 36%, դեղին՝ 13%, կապույտ՝ 6%, սև՝ 4%, կարմրա-մանուշակագույն՝ 2%:

Ապակու կանաչ գույնն ունի զանազան մգություն՝ թույլից մինչև խոր մուգ, ըստ որում կան և տարբեր երանգներ՝ դեղնավուն, կապտավուն: Այս ամենը պատահականություն չէ, այլ որոշակի բաղադրատոմսի արդյունք, որը բովախառնուրդի մեջ նախատեսում է պղնձի կամ երկաթի օքսիդներ և ենթաօքսիդներ:

Դվինի վարպետները կարողանում էին ապակին անգույն դարձնել, բայց միշտ չէ, որ նրանց հաջողվում էր ստանալ մաքուր անգույն ֆակտուրա, սովորաբար մնում էին դեղինի, երկնագույնի և կանաչի թույլ երանգներ, որ բացատրվում է ելակետային հումքի մեջ եղած խառնուրդներով:

Դվինի ապակեգործության գոյության ընթացքում հումքի բազան ըստ երևույթին, եղել է ընդհանուր և, դատելով արտադրանքի մասսայականությունից, ոչ թանկ:

Որոշ նմուշներից պարզ երևում է, որ դվինցի ապակեգործները արդեն գիտեին ապակին մարգանեցի միջոցով անգույն դարձնելու եղանակը: Դա երևում է ոչ լիովին անգույն նմուշներից, որոնց մեջ նկատելի են մարգանեցի թույլ երակ-

ներ: Մարգանեցը, հավանաբար բերվում էր հեռվից և օգտագործվում հազվադեպ, կարմրա-մանուշակագույն ապակյա անոթներ պատրաստելիս: Այդ գույնի ապակին օգտագործվում էր նաև անգույն ապակուց պատրաստված իրերը զարդարող թելերի կամ կետերի համար:

Ապակյա իրերի բոլոր տեսակները կարելի է բաժանել խմբերի, հիմք ունենալով մի կողմից՝ նրանց կիրառումը, մյուս կողմից՝ պատրաստման տեխնիկան: Ապակյա անոթները ըստ կիրառման կարելի է բաժանել կենցաղային սպասների և տեխնիկական օգտագործման ամանեղենի: Բացի այդ ապակուց, ինչպես արդեն ասվեց, պատրաստում էին զարդեր՝ ուլունքներ, ապարանջաններ, մատանիներ. ապակին օգտագործում էին նաև ճարտարապետության մեջ (խճանկար, լուսամուտի ապակի):

Ապակին այն նյութերից է, որոնք մշակվում են ամենատարբեր եղանակներով: Բարձր ջերմաստիճանի պայմաններում այն կարելի է փչել, ձուլել, մամլել, դրոշմել: Ավելի ցածր ջերմաստիճանում ապակին դառնում է ծորուն, հնարավոր է ձգել և ստանալ հաստ ու բարակ թելեր: Սառը վիճակում ապակին կարելի է կտրել, հղկել, ողորկել:

Ապակյա ամանեղենի պատրաստման տեխնոլոգիական եղանակները խիստ բազմազան են: Անոթներ պատրաստելու ամենատարածված և կատարյալ եղանակը ազատ փչումն էր: Այս եղանակը հայտնաբերվել է մեր թվականության սկզբին և ոչ մեծ կատարելագործումներով կիրառվում է մինչև օրս: Այս տեխնիկայի տարբերակներից է կաղապարի մեջ փչելու եղանակը, որն օգտագործվում է ավելի բարդ ձևի ու գծագրության անոթներ պատրաստելու համար և հնարավորություն է տալիս հարթ մակերես ու սահուն ձև ստանալ: Բարդ գծագրություն և նախշավոր մակերես ունեցող անոթներ պատրաստելու մյուս եղանակը կոչվում է «հանդարտ փչում»: Ապակեգործության մեջ օգտագործվել են նաև մետաղաձուլական որոշ եղանակներ (ձուլում և մամլում):

Անոթները նախշվում էին դարձյալ տարբեր եղանակներով՝ ձգված ապակաթելի վերադիր նախշերով, փորագրությամբ (քարե իրերը), դրոշմումով և քանդակումով (մետաղը), էմալով և ոսկով գեղազարդելով (խեցեղենը): Դվինի ապակեգործները գիտեին և կիրառում էին այս բոլոր միջոցներն ու եղանակները:

Դվինի միջնադարյան իրերի ուսումնասիրության ընթացքում նախ պետք է հնագիտական տվյալների հիման վրա թվագրել դրանք և որոշել պատրաստման վայրը՝ առանձնացնելով տեղական և ներմուծված իրերը:

Ապակյա իրերի թվագրման հարցում ապակեգործության պատմությանը նվիրված որոշ աշխատություններում մինչև օրս էլ գերիշխող է ոճական վերլուծության մեթոդը, քանի որ անտիկ և միջնադարյան ապակու հավաքածուների մեծ մասը կազմվել է պատահական, գնված իրերից: Սակայն գեղարվեստական վերլուծությունը, որի հիմքում ընկած է ձևերի նմանությունը. հաճախ հաշվի չի առնում այդ ձևերի կայունությունը, մինչդեռ վաղ շրջանի ապակեգործությունը աչքի էր ընկնում խիստ ավանդապահությամբ:

* * *

Դվինում առավել հնագույն ապակյա իրերի խումբը ներկայացնում են փորագրված զարդանախշով կիսագնդաձև թասերը և ոչ մեծ սրվակները: Թասերը և սրվակներից մի քանիսը զարդարված են կլոր, ձվածիր և վեցանիստ հղկված բլթակներով: Դվինում այդպիսի թասերի բեկորներ գտնվել են թե՛ միջնաբերդի ստորին շերտերում, թե՛ քաղաքի կենտրոնական թաղամասում և թվագրվում են VI—VII դդ., բայց բլթակներով թասեր հանդիպում են և ավելի ուշ շրջանում՝ VIII—IX դդ. կոմպլեքսներում: Հղկված բլթակներով հաստատվող թասերը պատկանում են հնագիտական առարկաների այն խմբին, որ տարածված է եղել Ասիայի ու Եվրոպայի ընդարձակ տարածության վրա և կիրառվել է տնականորեն: Կովկասի անտիկ և միջնադարյան հուշարձաններից գտնված ապակյա հղկված իրերի ուսումնասիրության ընթացքում քանիցս առաջ է քաշվել այդ անոթների ծագման հարցը: Գոյություն ունի երկու կարծիք, որոնցից առաջինի համաձայն այդ թասերը տեղական են, իսկ ըստ երկրորդի՝ ներմուծված Իրանից, Իրաքից, Եգիպտոսից, Ասորիքից, Փոքր Ասիայից և նույնիսկ Եվրոպայից (Հռոմեական մարզից)՝ Սև ծովի վրայով: Դվինի նյութերում կան նմուշներ, որոնց միջոցով հաստատվում են գոյություն ունեցող № № 1 և 2 թասերի բեկորները, անկասկած, ներմուծված են և իրենց զուգահեռները ունեն Իրանում ու Իրաքում: Սակայն այս խմբի իրերի հիմնական մասը (I ա և այլն), որը նախորդ նմուշներից տարբերվում է ապակու ֆակտուրայով, կատարման տեխնիկայով և ձևի մասսայականությամբ, մեծավոր զուգահեռներ ունի անդրկովկասյան հուշարձանների նյութերում (Հացավան, Ուրբնիսի, Սուդիզիլան,

Շամախի և Կապալա): Այս հանգամանքը մտածել է տալիս, որ եղել է այդօրինակ ապակյա իրերի պատրաստման կենտրոն (գուցե և կենտրոններ), որը գոյատևել է մի քանի դար (VI—IX դդ.):

Հետագա ժամանակաշրջանի ապակյա ամանեղենի մեծ քանակություն է գտնվել Դվինի կենտրոնական թաղամասի պեղումների ժամանակ: Այդ նյութը, որ ուղեկցվում էր արաբական դրամներով (VIII—IX դդ.), հեշտությամբ թվագրվում է IX դարից ոչ ուշ ընկած ժամանակաշրջանով: Նյութը բաժանվում է երեք խմբի:

Առաջինը կենցաղային ամանեղենի նմուշները և լուսատու հարմարանքներն են (կանթեղներ, նրագակալներ, մոմակալներ): Սրանք արդեն պատրաստված են բաղմազան տեխնիկայով և տարբեր որակի ապակուց: Բազմապիսի նյութի առկայության շնորհիվ հնարավոր է դառնում մի շարք կարևոր եզրակացություններ անել:

Նյութի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Դվինի ապակեգործները կիսագնդաձև թասեր են պատրաստել VII—VIII դարերում: Դրանց արտադրությունը շարունակվել է նաև IX դարում, սակայն այս շրջանում արդեն արհեստը զգալիորեն կատարելագործված էր, իսկ ձևերը և զարդարման եղանակները բազմազան էին:

Կենտրոնական թաղամասի IX դարի շերտերից պեղված նյութերի մեջ կան ապակյա ամանեղենի այնպիսի նմուշներ, որոնք պատրաստված են հանդարտ փչելու եղանակով և հիշեցնում են ավելի վաղ շրջանի հղկված բլթակներով անոթները, սակայն պարզորոշ արտացոլում են IX դարին հատուկ նորամուծությունները: Այս իրերն արդեն բնորոշ են ապակեգործության զարգացման հետագա ժամանակաշրջանի համար:

Որպես օրինակ վերցնենք հետևյալ նմուշները. ոչ մեծ գլանաձև բաժակ՝ կիսաթափանցիկ անգույն ապակուց, որ պահպանել է IX դարին բնորոշ ձևը, ապակու որակը և նախշի բնույթը: Մենք տեսնում ենք մեզ ծանոթ բլթակները, բայց ոչ կլոր, այլ երկարավուն և կատարված ոչ թե հղկմամբ, այլ կաղապարի մեջ հանդարտ փչելու եղանակով:

Անոթների հաջորդ խմբի մեջ են մտնում մի քանի բաժակներ, թասեր, սրվակներ և սափորներ՝ պատրաստված միևնույն տեսակի հաստ, դեղնավուն ապակուց, որն այժմ պատված է դեղնականաչ փառով: Ձևերով բազմազան այս առարկաները կիսագնդաձև թասերից տարբերվում են զանգվածեղությամբ և գծերի որոշ կոպտությամբ, նրանց ապակին խոշորահատիկ է, կիսաթափանցիկ, բայց ոչ շատ հաստ (2 մմ): Բերված նմուշները ցույց են տալիս, թե ինչպես էին դվինցի ապակեգործները հարմարվում նոր պահանջներին: Թասերի կողքին արդեն երևան են գալիս կլոր բլթակներով զարդարված բաժակներ: Բաժակներից մեկի օրինակով երևում է, թե ինչպես կիսագնդաձև թասը ստանում է տափակ հատակով գլանաձև բաժակի տեսք՝ պահպանելով զարդերի նախկին ձևը (նկ. I₁): Երկրորդ բաժակն (№ 36) ունի այլ, ավելի բարդ նախշ՝ փորագրված նշաձև զարդերի երկու շարք, որոնց մեջ տեղավորված է նույն ավանդական հղկված բլթակը: Երրորդ բաժակը (№ 40) նախորդ երկուսին նման է միայն ձևով, զարդարված է միմյանց մեջ հյուսված շեղանկյուններից, շրջագծերից ու գալարներից կազմված բարդ զարդանախշով: Նախշված բաժակների կողքին կան նաև հարթ պատերով գլանաձև բաժակներ և ուղիղ պատերով ոչ բարձր թասեր (№ 39): Ապակյա անոթների վաղ շրջանի խմբին կարելի է դասել նաև մի քանի նախշավոր բաժակները, որոնց նախշն ստացված է կաղապարի մեջ հանդարտ փչելու եղանակով:

Տափակ հատակով գլանաձև բաժակները IX—X դդ. լայնորեն տարածված էին Առաջավոր Ասիայում: Նրանք մեծ քանակությամբ հանդիպում էին Իրանի և Իրաքի, այսպես կոչված, «արաբական» արհեստանոցներում և ծավալուն առևտրի առարկա են եղել: Առաջավորասիական ծագում ունեցող գլանաձև բաժակներ են գտնվել Միջին Ասիայի, Հյուսիսային Կովկասի այլևայլ վայրերում և նույնիսկ հյուսիսում, մասնավորապես Շվեդիայում (Բիրկա): Հաստ, անգույն ապակուց, որը ժամանակի ընթացքում ծածկվում էր դեղնականաչ փառով, դվինցիները պատրաստում էին նաև տարբեր չափերի սափորներ, սրվակներ, սկահակներ, թասեր: Դրանք զարդարվում էին տարբեր եղանակներով: Վերը հիշատակվեցին հղկումը, փորագրումը, կաղապարումը: Ընդունված էր նաև ապակյա ամանեղենի զարդարման հնագույն եղանակներից մեկը՝ երկկողմանի նախշավորումը հատուկ ունելի-դրոշմիչներով: Սովորաբար այս եղանակով հնարավոր էր լինում զարդարել բացված եզրերով անոթները (№ 33, 100):

Կիսաթափանցիկ, մուգ դարչնագույն փառով ծածկված ապակյա անոթները կարելի է դասել տեղական ապակեգործական արհեստանոցների արտադրանքի թվին: IX դարում այդ արհեստանոցներն արդեն կարողանում էին բարձրորակ ապակի եփել, որը թեև խոշորահատիկ էր, բայց նախկինից ավելի բարակ էր: Դա ոչ միայն արհեստի զարգացման ընթացքի, այլև շուկայի աճող պահանջների հետևանք էր:

Հաջորդ, երրորդ խմբի մեջ ենք դասել ավելի բարձրարվեստ, փորագրված զարդանախշով ապակին: Անոթների ապակին դառնում է ավելի որակյալ, իսկ փորագրման տեխնիկան՝ ավելի կատարյալ: Հավանաբար այս նմուշները պատկանում են թանկարժեք և ոչ մասսայական ապակյա իրերի թվին: Անոթներից մի քանիսը ներկայացված են եզակի օրինակներով, իսկ եղած հետավոր զուգահեռները հիմնավոր տվյալներ չեն տալիս դրանց ծագման վայրի մասին: Այդպիսի բաժակներ են գտնվել Սամառայի պալատի պեղումների ժամանակ: Չի բացառվում դրանց որոշ մասի տեղական, դվինյան ծագման հնարավորությունը (№ 42, 43, 44):

Դվինի հավաքածուում կան ոչ խոր, բայց լայն փորագրման նմուշներ: Բաժակները պատրաստվում էին կաղապարի մեջ փչելու եղանակով, եզրերը կոպիտ էին կտրվում և, որպես կանոն, չէին մշակվում:

Ապակու մակերեսի մշակման մի այլ եղանակ է հիստավորումը կամ կողավորումը: Դվինի հավաքածուում այս տեխնիկայով մշակված են մի սրվակ և երկու սրվակի վզիկներ՝ անգույն, բարձրորակ ապակուց (80, 81, 82): Զանգվածեղ վզով, սկավառակաձև կամ հիստավորված բերանով այս սրվակները լայն տարածում ունեին: Դրանք հանդիպում են Սամառայում, Ռեյում, Ֆուստատում, Նիշապուրում և Միջին Ասիայում:

Հարկ է հիշատակել նաև հաստակող, ուղղանկյուն փոքրիկ սրվակները, որոնք ձուլված են կաղապարի մեջ և ապա լրացուցիչ ենթարկված սառը մշակման. սրանք տարածված են ամբողջ Արևելքում: Հիստավորված սրվակների վերը նկարագրված խմբից սրանք տարբերվում են պատերի վրայի ավելի բարդ մանրամասներով: Հավանական է, որ կաղապարի մեջ, որտեղ ձուլվում էր սրվակը, արդեն նշված էին բոլոր մանրամասները, որոնք հետագայում լրացուցիչ մշակման էին ենթարկվում (№ 72, 73, 74): Փոքր չափերի և նեղ վզի շնորհիվ այդ սրվակները շատ հարմար էին անուշահոտ յուղեր և օծանելիքներ պահելու և տեղափոխելու համար: Հայաստանում, Դվինից բացի, այդպիսի սրվակներ են գտնվել Անիում և Ամբերդում:

Դվինի ապակյա իրերի հավաքածուում աչքի է ընկնում բարձր ոտքով տանձաձև սափորը (№ 98), որն ունի ծեփվածքով զարդարված զանգվածեղ կանթ և պատրաստված է բարձրորակ, հաստ ապակուց: Սափորի իրանը ծածկված է եռանկյունի հատվածքի խոր, հարուստ փորագրությամբ: Ապակու մշակման այս եղանակը, ավելի կատարելագործված ձևով, մինչև օրս էլ տարածված է ապակեգործության մեջ: Նկարագրված սափորը ուշադրություն է գրավում ոչ միայն գեղարվեստական և տեխնիկական բարձր որակով, այլև ապակուն ոչ բնորոշ ձևով: Սափորի իրանը, ծորակը, ծեփվածքով կանթը, նստուկը սովելի շուտ հիշեցնում են մետաղյա, քան ապակյա անոթ:

Սրան շատ նման, նույն նախշով, բայց փիչ ավելի մեծ չափերի (բարձ. 20,5 սմ) սափոր է գտնվել Նիշապուրում (պահվում է Բեռլինի թանգարանում): Նույն տեղում կա և մի ուրիշ նման անոթ, բայց մի փոքր այլ նախշով: Լամմը այն թվագրում է IX դարով և պատրաստման վայրը համարում Ասորիքը կամ Իրանը, մատնանշելով, որ նման սափորներ են գտնվել նաև Սամառայում:

Նյութի սահմանափակ քանակը նկատի առնելով հնարավոր չէ խոսել վերոհիշյալ սափորների ծագման վայրի մասին, բայց հավանական է, որ Դվինի և Նիշապուրի սափորները խիստ ընդհանրություններ ունեն և թվագրվում են նույն ժամանակով: Սակայն միշտ չէ, որ գտնված վայրով որոշվում է նաև պատրաստման վայրը:

Ապակու վրա փորագրելու բոլոր ձևերից ամենաբարդն ու աշխատատարը բարձրաքանդակ փորագրումն է: Այս տեխնիկան, որ ծագում է անտիկ դարաշրջանում լայնորեն տարածված կամեյոնի տեխնիկայից, Մերձավոր Արևելքում առանձնապես մասսայական է դառնում IX—X դդ.: Բարձրաքանդակ-փորագրված ապակու արտադրության հիմնական կենտրոններից մեկը երկար ժամանակ համարվում էր Իրաքը: Վաղ մուսուլմանական գրավոր աղբյուրները որպես այդ տիպի ապակու արտադրության հիմնական վայր հաճախ հիշատակում են Բասրան և Բաղդադը, ինչպես նաև Իրանը (Նիշապուր, Ռեյ) և Եգիպտոսը:

Մեր հավաքածուում կա բարձրաքանդակ-փորագրված նախշով մեկ հատ սաղր, փուված թաս (№ 9):

Իրերի այս նույն խմբին է պատկանում անգույն ապակուց թասը (№ 8), որի պատերն ու կանթերը յուրօրինակ ձև ունեն: Թասը փչված է կաղապարի մեջ՝ կանթերի, պատերի ու կանթերի վահանակների բարդ նախշերի հետ միասին: Զարդանախշը լրացուցիչ մշակման է ենթարկվել փորագրման և հղկման միջոցով: Այս թասը փիչ զուգահեռներ ունի: Դրանցից մեկը, որ կանաչ ապակուց է և զարդարված է կենաց ծառի ու թռչունների պատկերներով, պահվում է Կորինթի

(ԱՄՆ) ապակու թանգարանում: Կատալոգում այս թասը նշված է որպես գնում և հատկանշվում է IX—X դդ. իրանական փորագրությամբ: Մի այլ թաս, որի պատերը նույնպես սեգմենտային ձև ունեն, պահվում է Բեռլինի թանգարանում (ենթադրաբար՝ ասորական կամ եգիպտական): Վերոհիշյալ երկու թասերի և կանթով սափորի ուսումնասիրման (№ 98) ընթացքում ուշադրություն է գրավում նրանց ձևը, որ ավելի բնորոշ է մետաղի, այլ ոչ թե խեցեղենի կամ ապակու համար: Ապակու և խեցեղենի ուսումնասիրման ընթացքում հետազոտողները քանիցս ընդգծել են այն հանգամանքը, որ ապակյա իրեր ստանալիս վարպետները հաճախ ընդօրինակել են այլ նյութերից (կավ, մետաղ) պատրաստված իրերի ձևերը, երբեմն առանց հաշվի առնելու ապակու որակն ու առանձնահատկությունները: Հազարամյակի կեսերին ամբողջ Առաջավոր Արևելքում լայնորեն տարածված էին թանկարժեք մետաղներից և լեռնային բյուրեղապակուց պատրաստված իրերը: Հատկապես հոչակված էին սասանյան արծաթե սպասները, որոնք աչքի էին ընկնում ձևերի և զարդարանքների բազմազանությամբ: Այս թանկարժեք իրերի տարածմանը զուգընթաց երևան են գալիս թանկարժեք նյութերի փոխարինիչներ: Ոսկե և արծաթե ամանեղենի կողքին ասպարեզ է գալիս նույն ձևերի, բայց ոչ թանկարժեք բրոնզե և խեցեղեն ամանեղենը: Փոխարինող է գտնվում նաև բյուրեղապակու համար՝ ապակեգործները սովորում են ստանալ այնպիսի ապակի, որն իր թափանցիկությամբ նման էր լեռնային բյուրեղապակուն, կարելի էր հալել և կաղապարի մեջ ձուլել ինչպես մետաղը և զարդարել փորագրությամբ՝ ինչպես քարը: Այսպիսով ստանում են մետաղյա և բյուրեղապակյա իրերին նման ամանեղեն, որը ավելի էժան էր, բայց և ոչ պակաս շքեղ:

Եթե մինչև VI—VII դարերը ապակեգործներն ամենուրեք, որպես կանոն, հետևում էին հռոմեական ապակեգործության դասական համաչափություններին, որոնց ձևերը սահմանվել էին ապակի փչելու խողովակի հայտնագործումից հետո, ապա այժմ երևան են գալիս ավելի ծանր անոթներ՝ կտրուկ գծագրությամբ, տափակ հատակով, բարդ, զանգվածեղ կանթերով և մետաղյա ամանեղենին բնորոշ մանրամասներով: Որոշ դեպքերում հարդարանքի ոճն ու եղանակները նույնպես նման էին լինում մետաղյա առարկաների հարդարման ոճին ու եղանակներին: Ապակին մշակելիս օգտագործվում էին հղկումը, նիստավորումը, դրվագումը: Այս առումով Դվինի ապակեգործությունը ինքնատիպ չէր և արտացոլում էր IX դ. ապակեգործության ընդհանուր առաջավորասիական ոճը: Փորագրված զարդանախշով հաստապատ ապակեղեն առատությամբ գտնվել է Սամառայում՝ IX դ. աբասյան խալիֆների մայրաքաղաքում, որը հեռու չէր իր ապակեգործներով հոչակված Բաղդադից: Վաղուց հայտնի է, որ Դվինը քաղաքական և տնտեսական կապեր ուներ Սամառայի և Բաղդադի հետ: Դվինում գտնվել են մեծ քանակությամբ VIII—IX դդ. աբասյան դրամներ, որոնք օգնում են առանձին առարկաների թվագրմանը: Փորագրված, հաստապատ ապակեղեն է արտադրվել նաև Իրանում (Նիշապուրում, Ռեյում) և Միջին Ասիայում, որոնց հետ նույնպես Դվինը առևտրական սերտ կապեր ուներ:

Արտադրանքի ձևերի նմանությունը պայմանավորված էր Արևելքի արհեստագործական կենտրոնների տնտեսական կապերով, որը պայմանավորում էր նաև շուկայի պահանջարկի նմանությունը: IX դարում, երբ ընդհանուր տարածում էր ստացել փորագրված զարդանախշով հաստակող ապակեղենը, ապակյա ամանեղենի հիմնական մասը պատրաստվում էր հենց այդ պահանջը բավարարելու նկատառումով:

Կա ապակյա իրերի ևս մեկ ինքնատիպ խումբ: Վերլուծության մեր ընտրած, գերազանցապես տիպաբանական մեթոդից ելնելով այդ խմբի նկատմամբ պետք է հատկապես ուշադիր լինել: Դրանք այն իրերն են, որոնք տեղական վարպետներն ընդօրինակել են ներմուծված նմուշներից: Այդպիսիներից կարող են լինել բաժակներից մի քանիսը և մեկ թաս՝ քուֆի գրերով մակագրությամբ (№ 7): Այս թասի մակագրությունը, ինչպես եզրակացրել է Ա. Ա. Բիկովը, չնայած իր արտաքին հստակությանը, անընթեռնելի է, քանի որ թասը ձուլելու կաղապարը, ըստ երևույթին, ընդօրինակել է մի անձնավորություն, որը ծանոթ չէր արաբական գրերին, բայց ուներ ամենայն հավանականությամբ, ապակյա, կամ մետաղյա թասի մակագրության նախնական նմուշը,: Թեև մեր օրինակի վրա սկզբնական մակագրությունը վեր է ածվել զարդանախշի, բայց մի քանի պահպանված գրերի օգնությամբ հնարավոր է որոշել բնօրինակի պատրաստման տեղն ու ժամանակը: Մակագրությունն արված է Հյուսիսային Միջագետքում IX դարում տարածված քուֆի գրերով:

Տարբեր բովանդակությամբ (ուրախության, երջանկության, փառքի, առողջության մաղթանքներ, օրհնանք, աֆորիզմներ կամ բանաստեղծական ասույթներ) արաբերեն մակագրություններով

մետաղյա, խեցեղեն, ապակյա թասերը, բաժակները, սափորներն այն ժամանակ շատ էին տարածված: Ընդլայնվող պահանջարկի հետևանքով ինքնատիպ և թանկարժեք օրինակները դառնում են պատճենման և ընդօրինակման առարկա: Հանախ, արաբերեն չգիտենալով, վարպետները մակագրությունը վեր էին ածում զարդանախշի: Այդ նույնն է արվել և մեր թասի հետ: Հնարավոր է, որ այն պատրաստել է դվինցի մի հայ վարպետ՝ իր արհեստանոցում, նմանեցնելով Հյուսիսային Միջագետքից բերված նմուշին: Այն ենթադրությունը, թե դվինցի վարպետներն ընդօրինակում էին ներմուծված ապակյա իրերը, հաստատվում է ևս մեկ զուտով: Կաթողիկոսի պալատում գտնվել է բարձրարակ, թափանցիկ ապակուց պատրաստված կոնաձև բաժակ՝ ուղիղ, հաստ հատակով: Հատակի վրա, դրսի կողմից, դրոշմված է արաբերեն մակագրության նմանակը: Չնայած պատկերի պարզությանը, մակագրության ոչ մի տառը չի ընթերցվում: Հնարավոր է որոշել միայն գրության ոճը՝ ուշ շրջանի քուֆի և մոտավոր ժամանակը՝ IX—X դդ. (նկ. XIII₃): Արաբերեն մակագրություններով իրերի առկայությունը և դրանց ընդօրինակումը Դվինի նման բազմազգ քաղաքում մեզ չպետք է զարմացնի: Այդպիսի առարկաները հաճախ օգտագործվում էին նաև Հայաստանի քրիստոնյա բնակչության, հատկապես ավագանու կողմից: Մասնավորապես հայտնի է հայոց թագավոր Աշոտի, Սմբատի որդու (IX դ.) կարմիր քարե (ալմանդինե) կնիքը, միջին քուֆի գրերով:

Քաղաքի կենտրոնական թաղամասում 1964—1965 թթ. կատարված պեղումներից գտնված նյութը վկայում է այն մասին, որ IX դ. Դվինում ամաններ էին պատրաստում նաև բարակ, թափանցիկ ապակուց: Այս նյութը կազմում է Դվինի կենտրոնական թաղամասից գտնված ապակյա իրերի երրորդ խումբը: Նրա հիմնական մասը գերազանցապես անոթների բեկորներ են, գտնված կաթողիկոսի պալատի և կաթողիկե եկեղեցու մոտերքում ընկած փոսերից: Առարկաների վերակառուցումից պարզվում է, որ դրանք եղել են հիմնականում ոչ մեծ, փռված թասեր (բարձր. 3—5 սմ, տրամագիծը վերին մասում՝ 6—15 սմ), մեծ մասամբ հարթ, երբեմն էլ ակոսատված մակերեսով: Թասերից մի քանիսն ունեն երկու կամ երեք ոչ մեծ օղակավոր կանթ: Թասերի վերին եզրը մշակված է մի քանի եղանակով, կան թասեր հաստացված կամ, ինչպես ընդունված է ասել, «տաֆցրած» շուրթով, ուղիղ կամ թեթևակիորեն ետ թեքված պատերով: Թասերը, որպես կանոն, նրստուկ չունեն, միայն մի քանիսի կենտրոնում կա ոչ մեծ գոգավորություն կամ բարակ օղակաձև նստուկ (նկ. V₁,₂ 1X₁,₄,₆):

Այս խմբին են պատկանում Դվինում գտնված տասներկու ձագարաձև լապտերիկները՝ նկատելիորեն դեպի դուրս թեքված եզրերով, որոնք առաջին հայացքից դժվար է որոշել, թե ինչու համար են օգտագործվել (նկ. XI₂): Հայտնի է, որ դեռևս հռոմեական ժամանակաշրջանում ընդունված էին մետաղյա բների մեջ դրված ապակե ճրագակալներն ու ղամպարները: III—IV դդ. խճանկարներում և հետագայում մանրանկարների վրա պատկերված են երկու տիպի ղամպարներ: Առաջինը փոքրիկ կանթերից կախված ղամպարներն են (№ 127), որ առանձնապես լայն տարածում ստացան արաբների մոտ և դարձան մուսուլմանական մզկիթների հոչակավոր էմալապատ և ոսկեզօծ ղամպարների նախատիպը: Երկրորդն այն ղամպարներն են, որոնք դնում էին նեցուկ-օղագոտիների մեջ և ապա կախում աշտանակից կամ քրիստոնեական եկեղեցիներում շատ տարածված մետաղյա պսակաձև ջահերից: Ամենայն հավանականությամբ, Դվինի ոչ մեծ թասերը հենց այն ղամպարները և ճրագակալներն էին, որոնք, դրվում էին մետաղյա նեցուկների մեջ: Քրիստոնեական եկեղեցիներում լուսավորությանն ու լուսային էֆեկտներին հատուկ նշանակություն էր տրվում: Հայտնի է, որ բյուզանդական տաճարները զարդարվում էին բազմաթիվ պսակաձև ջահերով: Այս սովորությունն ընդունված էր և հայկական եկեղեցում: Եկեղեցիների կամ ժամասացության հետ կապված որևէ արարողության նկարագրության ժամանակ միջնադարյան հայ պատմիչները բազմիցս նշել են տաճարի ներքին լուսավորության գործած ազդեցությունը: Լուսավորված գմբեթը և հատկապես կենտրոնական ջահը խորհրդանշում էին երկնակամարը:

Հայոց Կատրամիդե թագուհին (XI դ. սկիզբ) իր մայրաքաղաք Անիի կաթողիկե եկեղեցին զարդարելու համար Հնդկաստանից բերել է տվել մի թանկարժեք ջահ, որը, արծաթե խաչի հետ միասին, եկեղեցու զարդն էր համարվում: Անիում Գագիկի (XI դ. սկիզբ) տաճարի պեղումների ժամանակ գտնվել է բարդ կառուցվածքի բրոնզե ջահ. կլոր պսակին ամրացված էր երկու շարք օղագոտի՝ 117 լապտերիկների և ղամպարների համար: Դրանք պատրաստված էին գույնզգույն ապակուց և տարբեր չափերի էին, որի շնորհիվ տարբեր լուսավորություն էր ստացվում, մի մասը վառվում էր պայծառ լույսով, մյուսները միայն առկայծում էին:

Ջաճի բեկորներ են գտնվել նաև Դվինի կաթողիկոսական պալատում: Այն բաղկացած էր մետաղյա հիմքից՝ ապակյա դամպարների համար 20 օղագոտիներով: Այս ջաճը կենտրոնականը չէր, կախվում էր կողքի պատին եղած մետաղյա ձողից: Դվինի կաթողիկոսական պալատն ու կաթողիկե եկեղեցին, անտարակույս, լուսավորվում էին բազմաթիվ այդպիսի ջաճերով: Հավանաբար, հենց նրանց մասն են կազմում վերը նկարագրված ապակյա թասերն ու դամպարները: Այդ թասերի ապակին փխրուն է, նուրբ, թափանցիկ, թույլ կապտա-կանաչավուն երանգով:

Անոթների հաջորդ, չորրորդ խումբը կազմում են կակաչաձև գավաթաձևերը՝ առանց նստուկի կիսակլոր հատակով (№ 60—68, նկ. 10): Այդպիսի գավաթների 20-ից ավելի օրինակ է հայտնի, ըստ որում դրանցից յոթը պատրաստված են բարակ թափանցիկ ապակուց, ունեն հարթ պատեր, մյուս յոթի պատերը զարդարված են տարբեր խտության շեղ ակոսատումով: Մուգ դեղին ապակուց պատրաստված երկու բաժակ աչքի են ընկնում պատերի նախշերի առանձնահատուկ վարպետությամբ: Գավաթներից երեքն ունեն քառակուսի բջիջներից բաղկացած նախշեր, երկուսը սևին տվող դեղին են, իսկ մեկն անգույն է: Դվինի կենտրոնական թաղամասում գտնված գավաթներից մի քանիսը զարդարված են վերադիր բարակ ապակեթելով: Դրանցից տասնչորսը կանոնավոր դասված էին կաթողիկե եկեղեցու պատի մոտ փորված ոչ խոր փոսի մեջ: Այս հանգամանքը այն միտքն է հուշում, թե դրանք խնամքով թաքցրվել են որպես եկեղեցական սպասքի առարկաներ: Այս կապակցությամբ տեղին է նշել, որ միջնադարյան հայ գրավոր աղբյուրներում տարբեր տեսակի ամանեղենի հիշատակման ժամանակ որոշակիորեն տարբերակվում են եկեղեցական սպասեղենն ու աշխարհիկ ամանեղենը, ըստ որում եկեղեցում օգտագործվող բաժակներն ունեն սկիհ հատուկ անվանումը: Սակայն մենք չունենք ո՛չ դրանց նկարագրությունը, ո՛չ պատկերը: Ամենայն հավանականությամբ, աշխարհիկ և եկեղեցական սպասներն իրենց ձևերով քիչ էին տարբերվում, ուստի և հատուկ կանոններով արգելվում էր եկեղեցական սպասքն օգտագործել խնճույքների ժամանակ: Բարակ ապակուց կակաչաձև բաժակներն ըստ էության կրկնում են նախկին գլանաձև բաժակներին, բայց ապակու նոր ֆակտուրայի պայմաններում ստանում են ավելի կոկիկ ձևեր և սահուն գծեր: Այս բաժակների հարդարումը ևս տարբերվում է նախորդներից, քանի որ բարակ ապակին հնարավոր չէ փորագրել և հղկել:

Ակոսատումով զարդարելու եղանակը, որ նախկինում կիրառվում էր ոչ մեծ թասերի համար, սկսում է կիրառվել նաև գլանաձև բաժակների վրա:

Դվինի արտադրանքին կարելի է դասել ատակեղենի ևս մեկ խումբ: Դրանք ուղղահայաց պատերով ոչ խոր թասեր են, որոնց կենտրոնում ամրացված է մոմ դնելու խողովակ: Այս թասերի ապակին հաստաբակ է, ցածր որակի՝ ժամանակի ընթացքում փառակալված (նկ. V_{12}): Միջին դարերում ապակուց, կավից և մետաղից պատրաստված նրագակալ-մոմակալները շատ տարածված էին: Դրանցից գտնվել են և՛ Սամառայում, և՛ իրանական քաղաքներում (Ռեյ, Նիշապուր):

Ի տարբերություն մյուս առարկաների, մոմակալները գտնվել են Դվինի թե՛ կենտրոնական թաղամասում, թե՛ միջնաբերդում և լայնորեն տարածված են եղել VIII—XIII դդ.:

Դվինի կենտրոնական թաղամասում գտնված ապակյա իրերի ուսումնասիրությունը հիմք է տալիս ենթադրելու, որ թեև մինչև այժմ Դվինում և նրա շրջակայքում ապակեգործական արհեստանոցի հետքեր չեն հայտնաբերվել, սակայն IX դարում քաղաքն անկասկած ունեցել է իր արհեստանոցները, ուր պատրաստվել են բազմապիսի առարկաներ: Դվինում ապակեգործությունը տարածված արհեստ էր և աչքի էր ընկնում արտադրանքի բարձր որակով, բավարարում էր ժամանակի տեխնիկական և գեղագիտական պահանջները:

IX դարը Հայաստանի պատմության մեջ համեմատաբար խաղաղ ժամանակաշրջան էր: Դվին քաղաքը դառնում է առևտրի և արհեստների կենտրոն, աճում է քաղաքների թիվը: Քաղաքային արհեստագործության բարձր զարգացման մասին են վկայում նաև հնագիտական տվյալները, իսկ ըստ գրավոր աղբյուրների, Դվինի արհեստագործների հնչակը տարածված էր Հայաստանի սահմաններից շատ հեռու: Հնագիտական պեղումները տվել են Դվինի խեցեղենի և մետաղյա իրերի հիանալի հավաքածուներ:

Արհեստագործության ընդհանուր զարգացման պայմաններում ապակեգործության զարգացումը միանգամայն օրինաչափ էր: IX դարում ապակեգործները, պահպանելով իրենց նախորդների ավանդույթներն ու աշխատանքի եղանակները, ընդօրինակելով նրանց վարպետությունը, զգալիորեն զարգացրին տեխնիկան, բազմազան դարձրին հարդարման եղանակները:

Դվինի IX դարի կենցաղային ամանեղենի բնորոշ ձևերն ավելի հատուկ են մետաղին ու կավին,

2—463

քան ապակուն: Միևնույն տեսակի ապակուց պատրաստվում էին թասեր, բաժակներ, սրվակներ, սափորներ, նրագակալներ և այլն: Բազմազան է դառնում նաև անոթների զարդարման տեխնիկան: Հղկումից բացի ասպարեզ են գալիս փորագրությունը, քանդակումը, նիստավորումը, դրրվագումը, դրոշմանկարումը: Անոթները պատրաստվում էին ոչ միայն հարթ կաղապարների մեջ ձուլելով, այլև լայնորեն կիրառվում էր ձևավոր կաղապարների մեջ փչելու եղանակը: Այս նորամուծությունը կյանքի էր կոչվել արտադրության ընդլայնման անհրաժեշտությամբ (որն իր հերթին արտադրանքի մեծ պահանջարկի արդյունք էր): Այս եղանակը մասամբ փոխարինում էր փորագրությանը, որ թանկ և աշխատատար գործ էր: Դվինի ապակեգործները բարակ և թափանցիկ ապակուց պատրաստում էին ղամպարներ և ջահերի թասեր: Կենցաղի մեջ է մտնում բարակ ապակուց ամանեղենը: IX-րդ դարի ապակեգործության մեջ արդեն երևում են այն մի քանի նոր հնարանքների սաղմերը, որոնք զարգանալու էին հետագայում:

* * *

X—XII դդ. պետք է համարել Դվինի ապակեգործության վերելքի շրջան: Երկար ժամանակ ապակյա ամանեղենը գերազանցապես պերճանքի առարկա էր և մատչելի միայն հարուստ խավերին: Դեղեցիկ ապակյա անոթները զարդարում էին քաղաքի ավագանու տները, իսկ հատկապես նրբաճաշակ առարկաները պահվում էին եկեղեցիների գանձարաններում: Սակայն ժամանակի ընթացքում ապակյա ամանեղենի պահանջը մեծանում է և ապակեգործության ընդլայնումը դառնում անհրաժեշտություն: Հղկումն ու փորագրումը, որոնք թանկացնում էին ամանեղենի արժեքը, ապակեգործներն սկսում են փոխարինել նախշավոր կաղապարի մեջ փչելու եղանակով: IX դարի վերջում և X դարի սկզբում արդեն նախանշվում էին ապակյա ամանեղենի արտադրության ընդլայնման և քանակի ավելացման ուղիները: Այդ պրոցեսը հատկապես ուժեղանում է հետագա շրջանում, որն անմիջականորեն կապված է նաև արհեստների ընդհանուր զարգացման և ֆեոդալական քաղաքի վերջնական ձևավորման հետ: Քաղաքներում արհեստավորներն ավելի են մասնագիտանում ապակեգործության տարբեր ձևերի մեջ և ձգտում են բավարարել բնակչության լայն խավերի պահանջները: Արհեստագործական արտադրանքն արդեն դուրս է գալիս տեղական շուկայի շրջանակներից: Եվ եթե IX դարում գերակշռում էին անհատական պատվերով պատրաստված առանձին իրերը, ապա X դարում արտադրությունը դառնում է ավելի մասսայական: Արհեստագործության բնույթի այս փոփոխությունը նկատվում է նրա բոլոր նյուղերում:

Մետաղագործության մեջ եզակի առարկաներ ձուլելու մոմե մոդելները փոխարինվում են անջատվող կաղապարներով, որոնց շնորհիվ կարելի էր ավելի էժան և մասսայական արտադրանք տալ: IX դարում և X դարի սկզբում խեցեղեն ամանները պատրաստվում էին որպես գեղարվեստական իրեր, որոնց համար ծախսվում էին թանկարժեք նյութեր և մեծ աշխատանք: X դ. երկրորդ կեսից խեցեղենի արտադրության մեջ արտադրանքի էժանացման ձգտում է նկատվում, կավե ամանեղենը կորցնում է իր գեղարվեստական անհատականությունը, զարդարանքը դառնում է պարզ, նախշելիս օգտագործվում են տեղական էժան ներկեր, բրուտի մոտ գործածության մեջ են մտնում տրաֆարետն ու շտամպը:

«Մասսայական արտադրության» այս ընդհանուր ձգտումից ետ չի մնում և ապակեգործությունը: Դվինի X—XI դդ. հնագիտական նյութը ցույց է տալիս, որ ապակյա ամանեղենի արտադրությունը մեծացել էր, արտադրանքը դարձել թեթև, ձևերը՝ ավելի կլորավուն և սահուն: Ազատ փչումը դառնում է ապակյա ամանեղենի պատրաստման հիմնական եղանակը: Փորագրված զարդանախշի փոխարեն կիրառվում է կաղապարի մեջ հանդարտ փչումով արված նախշը: Նոր ձևերը լայնորեն գործածության մեջ են մտնում, աստիճանաբար դուրս մղելով հաստակող ապակեղենը, ուստի և անհրաժեշտ է դառնում նոր որակի ապակու ստացումը, որը պետք է հեշտությամբ հալվեր, լիներ թափանցիկ և էժան: Դվինի ապակեգործները կարողանում են լուծել նաև այս խնդիրը: XII—XIII դդ. ապակին իսկապես աչքի է ընկնում քիմիական նոր հատկանիշներով: Այս շրջանի նմուշների մեջ ավելի հազվադեպ է այն ապակին, որ փառակալվում է և ենթարկվում իրիզացիայի: Անոթների և թասերի չափերը մեծացվում են, ձևերը բարդացվում՝ նստուկներ և ոտքեր ավելացնելով: Սրվակները դառնում են սլացիկ, ձգված վզիկներով, բազմապիսի պսակներով, կանթերով: Նոր անոթներին ամենահամապատասխանը «հանդարտ փչման» եղանակն էր: Եթե այս եղանակի կիրառման սկզբնական շրջանում զարդարանքը կրկնում էր փորագրության նախշերը, ապա ժամանակի ընթացքում հարդարման

բնույթը փոխվում է: Փորագրված զարդանախշն ընդօրինակելու փոխարեն կիրառվում է ակոստումը: Այս եղանակն օգտագործելով, վարպետներն ստանում էին տարբեր զուգորդումներով բարդ նախշեր, տարբեր խտության և տարբեր ձևերի գծեր՝ շեղ, ուղիղ, խաչաձևվող, որոնք զուգակցվում են կետերի, կետագծերի և այլ նախշերի հետ: Այս եղանակով էին զարդարվում թասերը, բաժակները, գավաթները, սրվակների վզիկները:

Դեկորատիվ անոթներ պատրաստելու մյուս եղանակը անջատվող, զարդապատ կաղապարների մեջ փչելն էր: Երևան են գալիս նրբաճաշակ առարկաներ, ինչպիսիք են մեր հայտնաբերած երկգույն թասերը (№ 19), որոնցից մեկի ներքին մասը բաց դեղին է, իսկ վերինը՝ կարմրամանուշակագույն, երկրորդ թասը՝ վերևից բաց կանաչ, ներքևից՝ մուգ կապույտ:

Դվինի ապակյա անոթների հարդարման ամենատարածված եղանակը վերադիր նախշն էր՝ բաղկացած ապակյա թելերից, կետերից, կաթիլներից և ապլիկացիաներից, որոնք դրվում էին անոթի վրա դեռևս տաք վիճակում: IX դ. պատրաստում էին նաև հորիզոնական կամ թեք ղրված մեկ-երկու ապակեթելով զարդարված գավաթներ: Հետագայում Դվինի ապակեգործները կատարելագործում են այս եղանակը և այն լայնորեն կիրառում XII—XIII դդ.: Ապակեթելը պատրաստում էին տարբեր գույնի և հաստության և դնում զանազան ձևերով՝ ուղիղ գծով, մեկ կամ մի քանի հատ, ալիքաձև, կեռմաններով, ոլորաձև, ցանցաձև, կաթիլների և կետերի հետ զուգորդված:

Վերադիր նախշերով զարդարվում էին թասերը, բաժակները, գավաթները և սրվակները: Վարպետի հմտության և գեղարվեստական բարձր հաշակի դեպքում այս եղանակը անոթների տպավորիչ զարդարման մեծ հնարավորություններ էր ընձեռում: Բաժակների զարդը սովորաբար ավելի զուսպ էր լինում՝ մի քանի բարակ ապակեթել: Վերադիր զարդը շատ հարմար էր սրվակների, հատկապես նրանց վզիկների համար:

Հարդարման մեծ հնարավորություններ էր տալիս ապակյա լարերի, շերտերի, կետերի, ալիքաձև ու կտրատված գծերի զուգորդումը:

Հարդարման այս ոճը առանձնապես բուռն ծաղկում է ապրում XII դ. վերջում և XIII դ., երբ գրեթե բոլոր անոթները զարդարվում են գունավոր ապակեթելերի և կաթիլների զուգորդումով, որի շնորհիվ իրը խայտաբղետ և տոնական տեսք էր ստանում: Ապակեգործի վարպետության և հնարամտության մի նմուշ է իրար միացած երկու վզիկների տեսքով անոթի բեկորը, շքեղորեն զարդարված ապակեթելերով (№ 95): Ապակեթելերից և կետիկներից վերադիր զարդերի գեղեցիկ զուգորդում կա նաև երկու անոթների (№ 101, 102) և մեկ գավաթի վրա (№ 71):

Ապակյա անոթի արտաքին տեսքի համար ոչ պակաս կարևոր նշանակություն ուներ պսակի և հատակի ձևավորումը: Ապակյա անոթների եզրերը մշակվում էին տարբեր եղանակներով: Ամենատարածվածը և ամենապարզը, այսպես կոչված, տաքացված շուրթն էր, երբ անոթը խողովակից անջատելուց հետո եզրը հարթեցնում էին տաքացրած մետաղով և ստանում ողորկ, փիչ լայնացած պսակ: Երկրորդ եղանակը շուրթը ետ ծալելն էր, իսկ երրորդը՝ առավել հազվադեպը, պսակը ապակեթելով (երբեմն գունավոր) ձևավորելը: Առավել դժվար էր սրվակների եզրը կամ պսակը մշակելը:

Ապակյա անոթների հատակը ևս լինում էր տարբեր ձևերի՝ մեծ մասամբ հարթ ու կլորավուն և ներհկված, որի շնորհիվ անոթն ավելի կայուն և դիմացկուն էր դառնում: Այլ դեպքերում անոթներին ամրացվում էին նստուկներ և ոտքեր՝ օղակաձև կամ թասերի ձևով, որոնք պատրաստվում էին կամ առանձին կտոր ապակուց կամ անոթի հատակի մասը ձգելով: Դվինում առավել տարածվածը տարբեր հաստության և լայնության շերտերից կազմված օղակաձև նստուկն էր, երբեմն զարդարված փորագրությամբ կամ կսմթումով: Շատ ավելի դժվար էր բարձր ոտքեր և սկավառակաձև նստուկներ պատրաստելը:

Որոշ անոթներ, գերազանցապես սրվակները, սափորները և թասերը ունենում էին կանթեր (նկ. XX): Ջաղերից կախելու թասերի վրա լինում էր երկու կամ երեք փոքրիկ օղականման կանթ, իսկ սրվակների և սափորների կանթերն ավելի զանգվածեղ էին:

Դվինի ապակու հավաքածուում գերակշռում է հասարակ, անգարդ ամանեղենը, որը ամենաէժանն էր և, բնականաբար, ամենատարածվածը:

Դվինի ապակե իրերի հավաքածուն ունի կենցաղային բազմապիսի ամանեղեն. սեղանի սպասեղենի մեջ են մտնում թասերը, բաժակները, ըմպանակները, սափորները, ջրամանները, տափաշշերը, մթերքներ պահելու ամանեղենը: Որոշ անոթներ օգտագործվում էին դեղանյութեր, օծանելիքներ, անուշահոտ յուղեր, քսուկներ, և այլն պահելու համար: Ապակուց պատրաստում էին նաև թասեր և լապտերիկներ, հրազակալներ, մոմակալներ ջահերի և աշտանակների համար: Այս

խմբին պատկանող նյութ գտնվել է Դվինի բոլոր շերտերում, առանձնապես առատորեն է հանդիպում միջնաբերդի XII—XIII դդ. բնակարաններում: Ապակյա անոթներ էին օգտագործում նաև, այսպես կոչված, «ալքիմիկոսները»: Միջնադարյան Հայաստանում ալքիմիան ամենատարածված զիտություններից էր: Ինչպես պարզվում է մեզ հասած ալքիմիական տրակտատներից, նրանց ծանոթ էին տարբեր տեսակի դեղանյութերի, ներկերի և համաձուլվածքների ստացման եղանակները: Իրենց դեղատոմսերով և գործնական խորհուրդներով ալքիմիկոսները նպաստում էին արհեստների տեխնոլոգիայի կատարելագործմանը: Նրանք լավատեղյակ էին ոսկերչության, մետաղագործության և ապակեգործության նրբություններին: Այս ամենի համար անհրաժեշտ էին հատուկ սարքավորումներ: Ձեռագրերում պահպանվել են աշխատանքի համար անհրաժեշտ որոշ առարկաների մանրամասն նկարագրություններ, դրանց մեջ զգալի տեղ է գրավում ապակյա ամանեղենը:

Դվինի հավաքածուում կան անոթներ, որոնց կիրառությունը կապված է հենց ալքիմիայի հետ: Դրանք նուրբ, թափանցիկ ապակուց պատրաստված ոչ մեծ անոթներ են, այսպես կոչված «ալամբիկներ», որոնք երկու տեսակի են:

Բարդ ձևի՝ «ալամբիկների» առաջին տեսակը ներկայացված է երկու ամբողջական և մեկ ոչ լրիվ նմուշներով (№ 123, 124): Հայերեն ալքիմիական տրակտատները հիշատակում են «ալամբիկների» կամ «լամբիկների» մի քանի տարատեսակ: Որոշ ձեռագրերում կան այս անոթների շատ կոպիտ և սխեմատիկ, բայց միանգամայն հասկանալի զատկերները: Հայերեն ձեռագրերի նկարագրությունների և պատկերների մեջ կարելի է հեշտությամբ հանաչել առաջին խմբի մեր անոթները:

Այլ նկարագրություններում ալամբիկը ներկայացված է որպես թորիչ սարքավորման մաս: Ըստ որում հայ ալքիմիկոսներին հայտնի էին այս սարքավորման մի քանի տեսակներ, որոնք տարբեր բարդության կառուցվածք ունեին:

Ալամբիկների երկրորդ տեսակն ավելի պարզ կառուցվածք ունի. դրանք փոքրիկ բաժակներ են (բարձ. 11 սմ), կլոր հատակով և անոթի պսակից դեպի ցած ուղղված կնճիթով (№ 125, 126):

Նկարագրված ալամբիկների տերմինոլոգիան և ժամանակագրական շրջանակները ևս մեծ են: Դրանք հանդիպում են Եգիպտոսի, Իրաքի, Իրանի, Միջին Ասիայի հնագիտական կոմպլեքսներում, սկսած VI դ., բայց ավելի հաճախ՝ VIII—XIII դդ.:

Ալամբիկների տարբեր գործադրություն ունեին և, հավանաբար, ալքիմիական լաբորատորիայի անհրաժեշտ առարկաներից էին: Դրանցով կարելի էր հեղուկները լցնել նեղ վզով անոթների մեջ: XIII դ. բաղդադյան մի մանրանկարում ալամբիկը պատկերված է որպես արյուն բաց թողնելու հարմարանք: Պահպանված հայերեն ալքիմիական ձեռագրերը XVII—XVIII դդ. են, սակայն ընդօրինակված XIII դ. ձեռագրերից: Բայց հնագիտական նյութը ցույց է տալիս, որ Հայաստանում ալամբիկներ են եղել և ավելի վաղ շրջանում, արդեն X—XI դդ.:

Մյուս անոթը, որը մենք դասում ենք քիմիական լաբորատորային ամանների կարգը, կանաչավուն երանգի թափանցիկ ապակուց շիշ է (բարձ. 22 սմ): Շշի վզիկը հիմքում գնդաձև հաստանում է, իսկ իրանը միջին մասում, ներսից, ունի ամբողջ շրջագծով ձգվող նեղ ծալք (№ 122):

Ներքին ծալքը, որ անշուշտ մեծ դժվարությամբ է ստացվել, չի կարող պատահական լինել: Նա անտարակույս գործնական նշանակություն ուներ: Այս կառուցվածքի շշերն, ամենայն հավանականությամբ, հեղուկներ քամելու անոթներ էին՝ նստվածքը մեջը թողնելու հարմարանքով: Անոթի ներսի ծալքը և վզիկի վրայի գնդաձև լայնացումը հեղուկը թափելիս օգնում էին նստվածքը պահելուն:

Ալքիմիական ամանեղենի թվին կարելի է դասել նաև ձվաձև անոթները, որոնք լավ ծանոթ են խեցեղեն նմուշներից (№ № 105, 107):

Քաղաքի միջնաբերդի տարբեր մասերից գտնվել են ոչ մեծ տափակ բեկորներ՝ ներս ծալված եզրերով: Ուշադիր զննումից պարզվեց, որ դրանք ապակյա սկավառակների բեկորներ են: Սեգմենտների աղեղների հաշվարկումները տվեցին հինգ սկավառակների չափեր՝ 18, 20, 21, 22, 27 սմ տրամագծով: Դրանցից չորսի ապակին անգույն թափանցիկ է, մեկը՝ կարմրամանուշակագույն: Սկավառակների կենտրոնը հաստ է (3—5 մմ), ծայրերը՝ բարակ (1 մմ): Հավանաբար մենք գործ ունենք լուսամուտի ապակի սկավառակների հետ: Մի կողմից կարմիր ներկված հարթ բիբեղների ձևով լուսամուտի ապակու բեկորներ են գտնվել Դանիի պալատի պեղումների ժամանակ III դարի շերտից: IX—X դդ. լուսամուտի ապակին լայնորեն կիրառվում էր Եգիպտոսում (Իբն Թուլունի մզկիթը Կահիրեում, IX դ.), Սամառայում, Միջին Ասիայում (Աֆրասիաբ, Նիսա, Խորեզմ): Դրանք թերթավոր ապակու կտորներ էին, դրված նախշավոր խորշերի, գիպսե կամ փայտե վանդակա-

վոր շրջանակների մեջ, քանի որ ապակեգործները դեռ հնարավորություն չունեին ապակու մեծ թերթեր ստանալ:

Տափակ հաստ ապակու երկու բեկոր է գտնվել կաթողիկե եկեղեցու պեղումների ժամանակ. առաջինը կարմրա-մանուշակագույն եռանկյունի է, մյուսը՝ բաց կանաչավուն ապակի:

Անիում և Դվինում գտնվել են ապակու համար նախշավոր խորշեր ունեցող ալեբաստրե շրջանակներ: X դարի պատմիչ Թովմա Արծրունին Դազիկի Ալթամար կղզու վրա կառուցված պալատը նկարագրելիս նշում է, թե ինչ տպավորություն էին գործում պալատի ապակեպատ լուսամուտները, որոնք արևածագի և մայրամուտի ժամանակ փայլփլում էին լեռի հարթ մակերևույթի վրա և հեքիաթային լույս էին արտացոլում: Դժբախտաբար պալատը չի պահպանվել և նրա մասին մենք գիտենք միայն պատմիչի նկարագրությունից:

Կլոր սկավառակները երևան են եկել ավելի ուշ, դրանք մեկ կամ մի քանի հատով դնում էին լուսամուտի փայտե շրջանակների մեջ: Միհարկանի տները, որտեղ կանոն, ունենում էին չորս սյուների վրա հենված տանիք, վերևից եկող լուսավորությամբ, իսկ երկու և ավելի հարկ ունեցող տները, ինչպես և եկեղեցիները չէին կարող պատերին լուսամուտ չունենալ: Լուսամուտի սկավառակների բոլոր հինգ բեկորները էլ գտնվել են միջնաբերդի շենքերում: Ամենամեծ տրամագծով սկավառակների բեկորները գտնվել են միջնաբերդի բլուրի ստորին լանջին գտնվող խիստ յուրատեսակ տնից: Տունը կառուցված էր թրծած աղյուսից և աղյուսե հատակ ուներ: Լուսամուտի սկավառակների բոլոր բեկորները գտնվում էին XII—XIII դդ. շերտում, որը թվագրվել է համաձայն վրացական դրամների (Գեորգի III և Թամարա): Այնտեղ, ուր կար ապակյա ամանեղենի կանոնավոր արտադրություն, բնականաբար կարող էին պատրաստվել և լուսամուտի սկավառակներ, մանավանդ որ Դվինի լուսամուտի ապակին նման է այն ապակուն, որից հիմնականում պատրաստված է կենցաղային ամանեղենը:

Ճարտարապետության մեջ ապակու օգտագործումը չէր սահմանափակվում լոկ լուսամուտի ապակիներով: Կաթողիկե եկեղեցու պեղումների ժամանակ (1938) և նրանից ոչ հեռու գտնվող փոսերում (1964 և 1965) գտնվել են ոչ մեծ խորանարդիկներ՝ անթափանց սմալտա-ապակուց (չափերը՝ 3×6×6 մմ, 7×6×5 մմ)՝ մի մասը մոխրականաչ գույնի, մյուսը՝ անգույն, ոսկեգույն ֆոլգայով: 1938 թ. ապակյա խորանարդիկներ են գտնվել պատի փլվածքում, բնական գույնզգույն քարերի հետ միասին, որոնք նույնպես օգտագործվել են խճանկար կազմելու համար: 1951 թ. կաթողիկե եկեղեցու հատակին հաջողվեց հայտնաբերել խճանկարի մնացորդներ. խճանկարն ունի երկրաչափական նախշ՝ կազմված հինգ գույնի քարերից (կարմիր, սրճագույն, կանաչ, գեղին, սպիտակ): Այս խճանկար հատակը թվագրվում է մոտավորապես V—VI դդ., քանի որ հետագա վերակառուցման ժամանակ VII դարում, այս հատակի մի մասն արդեն մնացել էր մոլորի տակ:

Հայաստանում բնական խճից կազմված պատկերները գալիս են հնից: Գառնիում, III դարի անտիկ բաղնիքի պեղումների ժամանակ բացվեց բարդ զարդանկարով խճանկար հատակ: Սակայն խճանկարի համար ապակյա խորանարդիկները միջնադարյան Հայաստանում երևան են գալիս, հավանաբար, VII դ. միայն:

Ապակյա խորանարդիկներով էր զարդարված Զվարթնոց տաճարի հատակը (VII դ.): Խ. Դադյանը, 1907 թ. Դվինում կատարած իր աշխատանքի մասին հաշվետվության մեջ հաղորդում է, որ կաթողիկեի արևելյան աբսիդի պեղումների ժամանակ հայտնաբերել է խճանկար հատակ և Աստվածամոր պատկերը: VII դ. սկզբին մարզպան Սմբատ Բագրատունին վերակառուցում է Դվինի կաթողիկե եկեղեցին: Հավանաբար հենց այս ժամանակ էլ կաթողիկեն, բյուզանդական տաճարների նմանությամբ, զարդարվում է խճանկարներով: Այս դեպքում արդեն հնարավոր չէր բավարարվել սոսկ բնական խճի գունային գամմայով, պահանջվում էր գույների ավելի մեծ բազմազանություն, որ կարելի էր ստանալ ապակյա խորանարդիկների օգտագործման միջոցով: Անհրաժեշտ ապակին կարող էր ներմուծվել դրսից՝ սալիկների կամ կտորների ձևով, բայց խճանկարի համար անթափանց ապակի եփելը բարդ գործ չէր և Դվինի ապակեգործական արհեստանոցները անհրաժեշտության դեպքում միանգամայն ի վիճակի էին կատարելու այդ աշխատանքը:

Ապակուց Դվինում պատրաստում էին նաև զարդեր, մասնավորապես՝ ապարանջաններ, մատանիներ, ուլունքներ: Ամենից հաճախ հանդիպում են ապարանջաններ, որոնք աչքի են ընկնում ձևերի բազմազանությամբ, հարդարման պայծառությամբ ու խայտաբղետությամբ: Նրանք լինում են հարթ, ոլորված, գույնզգույն թելերից հյուսված, հարթեցված՝ մոզաիկ նախշով կամ գեղազարդ, հատվածքում կլոր, եռանկյուն, ձվածիր, կիսակլոր: Ապարանջանների ծայրերը նույնպես

մշակվում էին տարբեր ձևերով, կամ միմյանց միացված և խնամքով կոկված, կամ օձի գլխի ձև տված կամ էլ պարզապես հարթեցված: Դվինի ապարանջաններին բնորոշ գույներն էին կանաչը, կապույտը և սևը, ավելի սակավ՝ փիրուզագույնը: Հանդիպում են նաև ականջօղեր, որոնք ապարանջաններից տարբերվում են միայն իրենց ավելի փոքր չափերով: Ապարանջանները գտնվել են հիմնականում X—XIII դդ. շերտերում, բայց չունեն այնպիսի հստակ և բնորոշ պատկեր, ինչպես Նովգորոդինը, որտեղ որոշակի ապարանջանների առկայությամբ կարելի է թվագրել առանձին շերտերը: Դվինում մատանիներ ավելի սակավ են գտնվել, ընդամենը երեք հատ, պատրաստված են սև ապակուց: Դվինի պեղումների ժամանակ գրտնվել են նաև ապակու պաստայից և ապակուց ուլունքներ՝ հարթ, դրվագված, մոզաիկ: Դրանց մի մասն, անշուշտ, պատրաստված է տեղում, բայց որոշ նմուշներ ներմուծված են հարևան երկրներից: Դա միանգամայն հասկանալի է, քանի որ ուլունքները լայն առևտրի առարկաներ էին:

Դվինի X—XIII դդ. ապակեղենը պատրաստված է միջին որակի նուրբ ապակուց՝ թափանցիկ, անգույն կամ տարբեր մգության կանաչ կամ դեղին գույնի: Ապակու մասսայի սկզբնական հումքով պայմանավորված այս գույները կարելի է անվանել հիմնական՝ Դվինի ապակեգործական արհեստանոցների համար: Ապակյա իրերի նմուշների, նրանց տեխնոլոգիայի առանձնահատկությունների ու ոճի ուշադիր և մանրամասն քննությունը հանգեցնում է այն եզրակացության, որ Դվինում կային ապակեգործական մի քանի արհեստանոցներ:

Ապակեղենի առանձին խմբերի համեմատությունը հնարավորություն է տալիս երբեմն որոշել ապակեգործության ինքնատիպ գծերը և խոսել առանձին արհեստանոցների միայն իրենց բնորոշ առանձնահատկությունների մասին: Այսպես, ամանեղենի ողջ մասսայից առանձնանում է տարբեր ձևի անոթների մի խումբ՝ սրվակներ (ինվ. № № 2046—159, 2048, 229, 1947—143, 1617—202, 2121—272) (№ № №, 88, 89, 90), թասեր (№ 23) և բաժակներ (ինվ. № 2048—403, 400)՝ պսակի վրա տաքացնելով կպցրած կապույտ ապակեթելով: Այս անոթները գտնվել են քաղաքի տարբեր մասերում: Պսակի բնորոշ կապույտ ապակեթելից բացի կա և մի այլ ընդհանրություն՝ բոլորն էլ պատրաստված են նույն գույնի և նույն որակի ապակուց, որն ունի պղտոր-կաթնավուն իրիզացիա և մանր հաբեր: Ինչպես հայտնի է, ապակու կայունությունն ու պահպանելիությունը կախված են նրա քիմիական բաղադրությունից և եփելուց: Այս բոլոր անոթները, անշուշտ, պատրաստվել են միանման պայմաններում, այսինքն նույն արհեստանոցում: Նույն վարպետի կամ նույն արհեստանոցի պատրաստած իրերի թվին են պատկանում, հավանաբար, անգույն ապակուց սափորները (№ № 101, 102), բաժակները (№ 59), գավաթը (№ 71), որոնք զարդարված են կարմրա-մանուշակագույն և փիրուզագույն ապակեթելերով և կաթիլներով: Առանձին խումբ են կազմում սև և մուգ կանաչ գույնի, վերադիր ժանեկազարդ ունեցող գոտիներով ոչ մեծ թասերը (№ № 31, 32): Մի այլ խումբ են կազմում շատ բարձր որակի, նույն ապակուց պատրաստված կոնաձև նեղ բաժակները (№ № 45, 46, 47, 54—57): Կարելի է հաշվել արհեստանոցների անհատական առանձնահատկությունները կրող ապակեղենի այսպիսի մի քանի խումբ: Այդ արհեստանոցներն ունեին ապակի եփելու, արտադրանքի մանրամասների և հարդարման իրենց հատուկ եղանակները: Արհեստանոցներից մեկին բնորոշ էր կապտա-կանաչավուն երանգի ապակին, մյուսին՝ դեղինը: Ոմանք սիրում էին իրենց պատրաստած անոթները զարդարել կապույտ ապակեթելով, մյուսները՝ անգույնով, երրորդները՝ կարմրա-մանուշակագույնով:

Դվինի ապակեգործները, որպես կանոն, իրերի վրա իրենց դրոշմները չէին դնում, և դրանց՝ մի որոշակի արհեստանոցի արտադրանք լինելը պարզվում է նրանց բնորոշ, սիրված ձևերի, մանրամասների, զարդարման եղանակի միջոցով:

Մեր հավաքածուում կա ապակյա առարկաների շորս բեկոր, որոնք անգույն ապակուց պատրաստված ոչ մեծ մեդալիոնների տեսք ունեն. մեկը կլոր է (№ 120), մյուս երեքը ձվածիր տեսքի ձև ունեն (№ 121): Դրանք բոլորը կանթերի մասեր են եղել: Կլոր մեդալիոնն ամրացվում էր անոթի խոշոր կանթի վերին մասում, իսկ ձվածիր մեդալիոնները՝ անոթի ստորին մասում, իրանի և կանթի միացման տեղում: Մեդալիոնների վրա դրոշմված են արաբերեն մակագրություններ, որոնք արվել են դեռևս տաք ապակու վրա: Ձվածիր մեդալիոններից երկուսի վրա կարդում ենք. «Պատրաստել է Աբդալլահի որդի Ալին»: Այս մակագրությունն, անշուշտ, ապակեգործ վարպետի դրոշմն է: Ո՛չ արաբերեն մակագրությունը, ո՛չ էլ վարպետի անունը չպետք է շփոթեցնեն Դվինի նման բազմազգ քաղաքի ուսումնասիրողներին: Այն քաղաքում, ուր հայերի կողքին ապրում էին

նույներ, արաբներ և արաբալեզու այլ ժողովուրդներ, որտեղ, ժամանակակիցների վկայությամբ, ոչ ոմի չէր զարմացնում այն հանգամանքը, որ քրիստոնեական եկեղեցին և մուսուլմանական մզկիթը կանգնած էին կողք-կողքի, տարօրինակ չպետք է թվա վարպետ-ապակեգործի՝ «Ալի» անունը:

Այս կապակցությամբ պետք է հիշատակել նաև մյուս, կլոր մեդալիոնը: Սրա վրա նույնպես մակագրություն կա, բայց, չնայած որոշված տառերի արտաքին պարզությանը, մակագրությունն անընթեռնելի է: Հավանական է, որ տվյալ դեպքում մենք գործ ունենք արաբերեն մակագրության նմանակման հետ, որ այն ժամանակներում խիստ տարածված երևույթ էր:

1967 թ. Քաղաքի միջնաբերդի շինություններից մեկում գտնվել են շագանակագույն էմալով գեղազարդված թափանցիկ, կանաչ ապակուց թասի բեկորներ: Թասի վերին եզրի վրա (ստորին մասը չի պահպանվել) կա արաբերեն գրերով եզրագարդ, բայց, չնայած տառերի պարզությանը, դրանք անընթեռնելի են: Եզրազարդից ցած թասը զարդարված է երկրաչափական նախշերով: Այս բեկորի գտնված վայրից ոչ հեռու, 1967 թ. գտնվեց նույն կանաչ, թափանցիկ ապակուց պատրաստված և շագանակագույն էմալով նույն ձևով գեղազարդված արաբերեն գրերով մի ուրիշ ոչ մեծ թասի բեկոր (№ 70): Կա թափանցիկ, կանաչ ապակուց անոթի ևս մեկ բեկոր, դարձյալ շագանակագույն էմալի գեղազարդումով: Ըստ ապակու ֆակտուրայի, բոլոր այս բեկորները պատկանում են Դվինում արտադրված ապակեղենի հիմնական խմբին:

Ապակին էմալով գեղազարդելու տեխնիկան Առաջավոր Ասիայում սկսում է կիրառվել X դ. և լայն տարածում է ստանում XI—XIII դդ. բյուզանդական և ասորական ապակեգործական արհեստանոցներում, որտեղ սկսում են էմալով գեղազարդելու ասորական եղանակը հաջողությամբ զուգակցել ոսկով գեղազարդման եգիպտական եղանակի հետ, ուր այն հայտնի էր դեռևս անտիկ ժամանակաշրջանից: Այդ տեխնիկայի կատարելագործմանը համատեղ երկու դարի ընթացքում երևան են գալիս գեղարվեստական ոճի ուրույն գծեր և առանձնահատկություններ ունեցող տարբեր դպրոցներ: Որոշ դեպքերում ապակյա ամանեղենի գեղազարդումը հասնում է գեղարվեստական ստեղծագործության մակարդակին: Այս դրպրոցների և ուղղությունների առանձնահատկությունը ոչ թե ձևն ու նյութն է, այլ նկարի գեղարվեստական ոճն ու հարդարման տեխնիկան, ոսկու և էմալի զուգորդումը: Մեր ունեցած բեկորները գեղազարդման ոճով հիշեցնում են Ռաֆա քաղաքի դպրոցը, որը հռչակված էր իր նուրբ խեցեղենով և ապակեղենով:

Թասի վերին մասում եզրազարդի ձևով արված պարզ, բայց անընթեռնելի արաբերեն մակագրությունը, տառերի նույն խմբի կրկնությունը մեծ և փոքր թասերի բեկորների վրա, գրերի ոճի և էմալի գույնի նմանությունը մտածել են տալիս, թե այս անոթները գեղազարդվել են նույն արհեստանոցում: Ապակու ֆակտուրայի նմանությունը Դվինի թասերի ապակուն թույլ է տալիս ենթադրելու, որ այդ արհեստանոցը կարող էր Դվինում գտնվել:

Ապակին գեղազարդող արհեստանոցները հաճախ գոյություն էին ունենում ինքնուրույն, անկախ ապակեգործական արհեստանոցներից, որտեղից նրանք պատրաստի արտադրանք էին ստանում: Այդպիսի գեղարվեստական արհեստանոցներ կային Հալեպում և Դամասկոսում: Հունական Կորնթոս քաղաքում միաժամանակ (XI—XII դդ.) հիմնվել էին ապակեգործական երկու արհեստանոց: Նրանցից մեկը զանազան ամանեղեն էր պատրաստում, իսկ մյուսը՝ գեղազարդում էր անոթները:

Ապակեգործական արհեստանոցները Դվինում, ինչպես և այլ երկրներում չէին կարող ստեղծվել և զարգանալ առանց հարևան երկրների արհեստների ազդեցության, առանց նրանց ոճի ու վարպետության ընդօրինակման: Դվինի ապակեգործական արհեստանոցները բավական հստակորեն են արտացոլում հարևան երկրների ապակեգործների ազդեցությունը: Դրանում շոշափելի դեր է կատարել նաև պատմական իրադրությունը: Այսպես, IX դ., երբ Հայաստանի և Իրանի միջև քաղաքական սերտ կապեր են հաստատվում, երբ Հայաստանը փաստորեն Իրանի մի նահանգն էր և Աբասյանների մայրաքաղաք Սամառան հաճախ իր կամքն էր թելադրում Դվինին, մենք տեսնում ենք առևտրա-արհեստագործական փոխադարձ հարաբերությունների մի վառ պատկեր: Ապակեղենի նմուշներն, օրինակ, իրենց զուգահեռներն ունեն Սամառայի, Նիշապուրի, Ռեյի նյութերի մեջ: Մինչև անգամ տեղական արտադրանքի նմուշները ընդօրինակված են հենց դրանցից: Նույն պատկերն է ներկայացնում նաև խեցեղենը:

Ավելի ուշ, X—XI դդ., երբ պատմական իրադրությունը փոխվում է և վերականգնվում են տրնտեսական ու առևտրական հարաբերությունները

Բյուզանդիայի, Ասորիքի և Միջերկրական ծովի ավազանի արևելյան մասի քաղաքների հետ, ապակեղենի արտադրության բնույթը շեշտակիորեն փոխվում է և ասպարեզ է գալիս նախշավոր կաղապարի մեջ փչելը, լայնորեն տարածվում է վերադիր ապակեթելով զարդարելու եղանակը, որոնք հատուկ էին ասորական ապակեգործությանը:

* * *

Սակայն սխալ կլիներ մտածել, թե Դվինի նման վաճառաշահ քաղաքում բնակչությունը միայն տեղական ամանեղեն էր օգտագործում: Դվինցիները առևտրական լայն կապերի մեջ էին հարևան երկրների հետ: Նրանք լինում էին հեռավոր երկրներում, ընդունում էին տարբեր տեղերից եկած վաճառականների. Դվինի շուկայում լայն ապրանքափոխանակություն էր կատարվում:

Քաղաքացիների ունևոր խավը, հոգևոր և աշխարհիկ ավագանին, անշուշտ գնում և օգտագործում էր Իրանի, Իրաքի, Ասորիքի, Բյուզանդիայի, Վրաստանի հռչակված արհեստանոցների ապակյա ամանեղենը:

Դվինի հավաքածուի ներմուծված ամանեղենի նմուշների ուսումնասիրությունը պարզում է առևտրական կապերի այն նույն պատկերը, ինչ որ տալիս են գրավոր աղբյուրները և դրամագիտական նյութերը: VIII—IX դդ. Դվինը առևտրական աշխույժ կապեր ուներ արաբական խալիֆայության, հիմնականում աբասյաններին ենթակա երկրների և առաջին հերթին՝ Իրանի ու Իրաքի հետ: Նախորդ գլխում մենք տեսանք, որ VIII—IX դդ. աբասյան դրամների հետ միասին Դվինում գտնվել են Իրանում և Իրաքում պատրաստված ապակեղենի նմուշներ: Այս անոթները ապակու ֆակտուրայով և տեխնիկական որոշ առանձնահատկություններով խիստ տարբերվում են Դվինում պատրաստված, զարդանախշով փորագրված ապակյա անոթներից: Մեր հավաքածուում դրանց նմուշներից կարող են լինել ուռուցիկ փորագրությամբ թասը (№ 9), սեգմենտաձև պատերով թասը (№ 8), խոր փորագրությամբ տանձաձև անոթը (№ 98) և բաժակներից մի քանիսը, դարձյալ փորագրված զարդանախշով:

X—XI դդ. քաղաքական և տնտեսական մի շարք հանգամանքների հետևանքով Հայաստանի առևտրական կապերի ուղղությունը փոխվում է: Ընդլայնվում են հարաբերությունները Արևմուտքի, Բյուզանդիայի և Միջերկրական ծովի ավազանի արևելյան մասի հետ: Առևտրական կապերի վառ պատկերն են ներկայացնում դրամական գյուտերը: Դվինում հայտնաբերված բյուզանդական դրամները հատված են Կոստանդնուպոլսում: Նույն պատկերն են ներկայացնում նաև ապակեղենի նմուշները: Դվինում գտնվել են բյուզանդական ապակեղենի առաջնակարգ և հազվագյուտ օրինակներ, որոնք բացառիկ նշանակություն ունեն ոչ միայն Դվինի XI դ. առևտրական կապերի, այլև բյուզանդական ապակեգործության ուսումնասիրման տեսակետից (№ № 83, 113):

Այս խմբում հատուկ ուշադրություն է գրավում նուրբ, կապույտ ապակուց անոթը, որ գեղազարդված է ոսկով և գույնզգույն էմալով (№ 83): Սա մեկն է մեզ հայտնի այն հազվագյուտ առարկաներից, որոնք պարզորոշ արտացոլում են բյուզանդական մայրաքաղաքի XI դ. վարպետների տեխնիկան ու ոճը: Այս նմուշն ուշագրավ է, նաև սլուժետային պատկերներով: Մեղալիոնների մեկի վրա տեսնում ենք նստած մարդու, որը ջութակ է նվագում՝ գործիքը ծնոտին հենած: Սա հորիզոնական դիրքով տաճված ջութակի հնագույն պատկերն է: Բռնելու այս ձևը հատուկ էր Արևմուտքի երաժիշտներին, մինչդեռ Արևելքում այդ տիպի երաժշտական գործիքները նվագում էին ուղղահայաց դիրքով բռնած:

Դվինում գտնվել են և ավելի վաղ շրջանի բյուզանդական ապակեղենի առաջնակարգ նմուշներ, ինչպես մոզաիկ թասը, որը կարելի է թվագրել IX—X դդ.: Թասի (№ 10) հետ գտնվել են X—XI դդ. բյուզանդական դրամներ և նուրբ, կապույտ ապակուց անոթ՝ զարդարված սպիտակ էմալով (№ 113): X դ. պատմիչ Հովհաննես Դրասխանակերտցու մոտ մի հետաքրքիր վկայություն կա բյուզանդական ապակյա անոթների մասին: Նա պատմում է, որ Սմբատ Բագրատունի թագավորը (830—914) այլ իրերի թվում արաբական Յուսուֆ զորավարին է նվիրել նաև ոսկով գեղազարդված գունավոր ապակուց գավաթ և բաժակ, պատրաստված բյուզանդական վարպետների ձեռքով:

Սակայն դվինցիները գեղազարդ ապակեղենը ստանում էին ոչ միայն բյուզանդական արհեստանոցներից: Դտնված դրամները, ցույց են տալիս, որ առևտրական աշխույժ հարաբերություններ են եղել նաև Ասորիքի քաղաքների հետ: Գեղազարդման ոճի և նկարի կոմպոզիցիայի բնույթից ելնելով, որքանով որ հնարավոր է դատել պահպանված բեկորներից, Ռաֆայի արտադրանքի թվին կարելի է դասել և № 52 բաժակի բեկորները, գուցե և զանգվածեղ կափարիչով զարդեղենի տուփը՝ գունավոր անթափանց ապակուց (№ 119): Ավելի ուշ՝ XII—XIII դդ. իրենց գեղազարդ ապակյա

ամանեղենով հռչակվում են Հալեպն ու Դամասկոսը: Այնտեղի արհեստանոցներում սկսում են պատրաստել մեծ բանակությամբ ոսկու օգտագործումով շքեղորեն զարդարված անոթներ, որոնք անպայման ունենում էին հուֆի գրերով արաբերեն մակագրություն: Դվինի պեղումների ժամանակ գտնվել են (53, 5, 7) նաև այս հռչակավոր արհեստանոցներում պատրաստված անոթների բեկորներ: Անոթների հատակ ներկայացնող մի քանի բեկորների վրա կան գույնզգույն էմալով կատարված և անգույն ապակու շերտով ծածկված նկարներ (№ 31): Սրանք իրենց մեծավոր զուգահեռներն ունեն վրացական Օրբելի իշխանական պեղումների ժամանակ գտնված նյութերի հետ (Ն. Ն. Ուզելինի պեղումներ. նյութերը դեռ հրապարակված չեն):

Դվինի թե՛ քաղաքական, թե՛ տնտեսական կապերը Վրաստանի հետ XII դ. և XIII դ. սկզբին շատ սերտ էին ու թեև սելջուկյան էմիրությունների հետ հանախակի պատերազմների պատճառով այս ժամանակաշրջանը առևտրի համար այնքան էլ նպաստավոր չէր, բայց և այնպես առևտուրն աշխույժ էր և, հավանորեն, փոխադարձ: Այդ է վկայում վրաց Թամար (1184—1213) և Ռուսուդան (1223—1247) թագուհիների դրամների զգալի հոսքը Դվին:

Դվինի պեղումների ժամանակ հայտնաբերված ապակյա իրերից բաղկացած նյութը պարզորոշ ներկայացնում է միջնադարյան քաղաքի արհեստագործության և առևտրի բնույթը: Արտադրողական ուժերի ընդհանուր վերելքը, որ զուգակցվում էր ծավալուն առևտրով, խթանեց տեղական ապակեգործության զարգացմանը, հայ վարպետները օգտագործում էին այն երկրների ապակեգործության ավանդույթներն ու նվաճումները, որոնց հետ Հայաստանը հարաբերություններ ուներ: Ապակյա իրերը հաստատապես մուտք են գործում բնակչության կենցաղի մեջ: